31. Vardanyan A., *Green entrepreneurship and sustainable development in Armenia*, 2020.
32. World Economic Forum, Measuring and reporting ESG performance: Challenges and opportunities. *WEF Report*, 2021.
33. Zhu Q., Geng Y., Drivers and barriers of environmental management in the supply chain: A Chinese perspective. *Journal of Environmental Management*, 2013, 127, 110-118.
<https://doi.org/10.1016/j.jenvman.2013.05.020>

ОТ ПРИБЫЛИ К ПЛАНЕТЕ: РОЛЬ ЗЕЛЁНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В ПРОЦЕССЕ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Арусяк Иваниця

В статье рассматривается значимость зелёного предпринимательства в контексте устойчивого развития. Проанализированы экологические стратегии— от использования возобновляемых источников энергии и сокращения отходов до внедрения устойчивых цепочек поставок и инициатив корпоративной социальной ответственности (КСО). Исследование, основанное на опросах и сравнительном анализе, выявляет лучшие практики и основные трудности, с которыми сталкиваются компании, стремящиеся следовать принципам устойчивости. Результаты показывают, что зелёные бизнес-модели не только способствуют росту долгосрочной прибыльности, но и позитивно влияют на состояние окружающей среды и социальное благополучие. Несмотря на это, финансовые барьеры, регуляторные сложности и рыночное сопротивление продолжают оставаться значительными препятствиями на пути к устойчивому развитию.

Ключевые слова: зелёный рост, устойчивое развитие, экологические инновации, долгосрочная прибыльность.

ՇԱՀՈՒՅԹԻՑ ԴԵՊԻ ՍՈՒՈՐԱԿ. ԿԱՆԱՉ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ

Արուսյակ Իվանյան

Հոդվածում քննարկվում է կանաչ գործարարության դերը կայուն զարգացման խթանման հարցում՝ վերլուծելով, թե ինչպես, օրինակ, բնապահպանական ռազմավարությունները՝ վերականգնվող էներգիայի օգտագործումը, թափոնների կրճատումը, կայուն մատակարարման շղթաները և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՄՊ) նախաձեռնությունները, կարող են ազդեցություն ունենալ ինչպես ֆինանսական, այնպես էլ բնապահպանական կատարողականի վրա: Հարցումների և համեմատական վերլուծությունների միջոցով հետազոտությունում քննարկվում են լավագույն իրավիճակներ և ընդհանրական դժվարություններ, որոնց բախվում են կայուն մոտեցումներ որդեգրած ընկերությունները: Հոդվածի արդյունքները ցույց են տալիս, որ կանաչ գործարարության մոտեցումները ոչ միայն բարելավում են երկարաժամկետ շահութաբերությունը, այլև դրական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի առողջության և հասարակական բարեկեցության վրա: Թեպետ ֆինանսական խոչընդոտները, կարգավորվող մարտահրավերները և շուկայական անկառավարելի դիմադրությունը շարունակում են մնալ հիմնական խնդիրների առանցքում:

Հիմնաբառեր՝ կանաչ զարգացում, կայուն զարգացում, բնապահպանական նորարարություն, երկարաժամկետ շահութաբերություն:

ԿԱՆԱՉ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ջեմա Պողոսյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության ասպիրանտ
poghosyanjema@mail.ru

Համառոտագիր

Ձեռնարկատիրությունը համարվում է նյութական բարիքներ ստեղծելու, հավելյալ շահույթ ձևավորելու և մարդկանց բարեկեցությունը բարելավելու միջոց: Ձեռներեցները տնտեսական գործունեություն ծավալելիս հիմնականում հետապնդում են մասնավոր շահեր՝ մի կողմից հաջողությամբ հանդես գալով մրցակցային շուկայում և նպատակ ունենալով ավելացնել իրենց սեփական կապիտալը, մյուս կողմից՝ ստեղծելով նյութական բարիքներ կամ կազմակերպելով ծառայություններ՝ նպաստելով մարդկանց աճող սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը: Սակայն հասարակությունը, օգտվելով ձեռնարկատիրական ծառայություններից, արդեն իսկ ակնկալիք ունի՝ պահպանելու մեր մոլորակը, հոգ տանելու շրջակա միջավայրի համար, ինչը շատ հաճախ անտեսվում է շահույթի ձևավորման մրցավազքում գտնվող գործարարների կողմից և, ցավոք, չի առնչվում նրանց հիմնական նպատակադրումներին: Հոդվածում քննարկվում են կանաչ վարկավորման նպատակադրումներն ու առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ բանկ, կանաչ վարկավորում, կանաչ ձեռնարկատիրություն, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:

Այսօր արդեն տնտեսական գործունեությունը կտրուկ տեղափոխվում է կայուն գործարարության ոլորտ: Մարդիկ փորձում են կիրառել այնպիսի կառավարման գործիքներ, որոնք նպաստում են կայուն ձեռնարկատիրությանը: Ընդլայնվում է հանրության նկատմամբ պատասխանատվությամբ ներդրումների շրջանակը, փոխվում են կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների ձևաչափերը, որպեսզի բոլորին հասկանալի լինի, թե որքան հաջողակ է բիզնես գործունեությունն ինչպես մասնավոր շահերի, այնպես էլ հանրային սպասումների տեսանկյունից: Տնտեսական գործունեության թե՛ ներքին և

թե՛ արտաքին շահառուներն արդեն իսկ հետաքրքրված են կազմակերպության կայուն զարգացման գնահատականներով, և եթե դրանք հուսադրող չեն, ապա կազմակերպությունում կարող են առաջանալ ինչպես բիզնես գործընկերներ կորցնելու, այնպես էլ շուկայում մրցակցային դիրքերի թուլացման ռիսկեր:

Կազմակերպությունները կանաչ ձեռնարկատիրության համատեքստում ներկայացնում են իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգերը¹: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն այն բիզնես գործառնություն է, որը վերաբերում է բանկին առնչվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրներին: Կազմակերպությունների կանաչ ձեռնարկատիրության նպատակն է գտնել նման խնդիրների լուծումներ, որոնք շահավետ կլինեն ինչպես բանկի, այնպես էլ հասարակության և պետության համար: «Հաճախորդ» հասկացությունը վերաբերում է բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվող կամ օգտվելու համար բանկ դիմած ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին:

Ֆինանսական շուկայում աճող նշանակությանը զուգընթաց՝ բանկն իր հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև գործունեության բոլոր ոլորտներում, առաջնորդվում է էթիկայի և բնապահպանական ստանդարտներին համապատասխան՝ նպատակ ունենալով դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա: Առևտրային բանկի բնապահպանական առաքելությունը թիրախավորվում է գործող և ներդրվող նորամուծությունների՝ բնության վրա բացասական ազդեցության գնահատմանն ու նվազեցմանը: Նշված առաքելության իրականացման նպատակով բանկը մեծացնում է էներգաարդյունավետ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելներում, որի շնորհիվ ընդլայնվում է նաև բանկի վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, ինչը կարևոր է ռիսկերի կառավարման և եկամուտի հավելյալ աղբյուրի ստեղծման տեսանկյունից: Բանկը կարևորություն է տալիս բնակարանային էներգաարդյունավետ վերանորոգման վարկավորման շարունակականությանը, ուստի վարկային քաղաքականության սկզբունքներից է բխում, որ էներգա-

¹ Տե՛ս **Ճուղության Ա., Գրիգորյան Լ.**, Կայուն զարգացման հաշվառում, ուս. ձեռնարկ, «Տնտեսագետ», 2004, էջ 112:

արդյունավետ հիփոթեքային և միկրո վարկավորումը լինի առաջնային թե՛ սոցիալական, թե՛ բնապահպանական տեսանկյունից, և կիրառվեն էներգաարդյունավետության գնահատման մեխանիզմներ վարկավորման տարբեր ուղղություններում²: Բանկի դիրքորոշումն է էներգախնայողությանն ուղղված ծրագրերի շարունակական բնույթը՝ ինչպես սեփական, այնպես էլ ներգրավված ռեսուրսների հաշվին: Բանկը խրախուսում է կառուցապատման և վերանորոգման աշխատանքներում էներգախնայող և էկոլոգիապես մաքուր նյութերի օգտագործումը: Հաճախորդների վարկավորման գործընթացում կիրառում է էներգաարդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Կանաչ վարկավորումը բանկերում նպատակ ունի նվազեցնելու ֆինանսական գործառնությունների բնապահպանական ազդեցությունը և խթանելու կայուն զարգացման գաղափարները: Այս հայեցակարգը ներառում է ֆինանսական քաղաքականություններ, որոնք նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբանության բազմազանության պաշտպանությանը: Բանկերը կարող են առաջարկել կանաչ վարկեր և ներդրումներ, որոնք ուղղված են բնապահպանական նախագծերին, օրինակ՝ կայուն էներգետիկայի, վերականգնվող ռեսուրսների և էներգետիկ արդյունավետության բարելավման ծրագրերին: Սա խթանում է շրջակա միջավայրի բարելավումը՝ համահունչ լինելով ժամանակակից հասարակության պահանջներին: Կանաչ վարկավորումը խրախուսում է բանկերին ներդրումներ կատարել այն ընկերությունների և նախագծերի մեջ, որոնք պաշտպանում են բնական ռեսուրսները: Սա նշանակում է, որ բանկերը գնահատում են իրենց հաճախորդների բնապահպանական քաղաքականությունները և նախապատվություն են տալիս նրանց, ովքեր իրականացրել են կանաչ մոտեցումներ: Կանաչ վարկավորումը նաև ներառում է ռիսկերի ճիշտ գնահատում և կառավարում, որոնք կապված են բնապահպանական փոփոխությունների և չբավարարված օրենսդրության հետ: Բանկերը պետք է ուշադիր հետևեն այն ոլորտներին, որոնք ենթակա են ռիսկերի, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և բնապահպանական աղետները:

² Տե՛ս **Ճուղության Ա., Խաչատրյան Ն.**, Կանաչ ձեռնարկատիրություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2024, էջ 169:

Կանաչ վարկեր

Կանաչ վարկերը նախատեսված են բոլոր իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և գյուղատնտեսությամբ զբաղվող անհատների համար³։ Ֆինանսական շահառուները պետք է գործեն Հայաստանում և ԵՄ պետություններում՝ կիրառվող բնապահպանական և սոցիալական օրենսդրություններին համապատասխան։

Ստանդարտ վարկը դասակարգվում է որպես կանաչ վարկ իր նպատակայնությունից ելնելով⁴։ Կանաչ վարկերը, ըստ նպատակայնության, կարելի է բաժանել ստորև նշված խմբերի։

- *Էներգաարդյունավետ (ԷԱ) ներդրումներ*։ ԷԱ վարկավորումը նախատեսված է այն ներդրումների համար, որոնք կապված են էներգախնայող տեխնոլոգիաների ձեռք բերման հետ, և որոնց առաջնային նպատակն է էներգիայի սպառման նվազեցումն է, կամ էներգախնայողությունը և/կամ ածխաթթու գազի արտանետման կրճատումն է առնվազն 20%-ով։ Կանաչ վարկ ստանալու համար կարելի է ներդրում կատարել ինչպես լրացուցիչ սարքավորման ձեռքբերման, այնպես էլ առկա սարքավորման փոխարինման համար։ Սարքավորման փոխարինման դեպքում էներգիայի (CO₂) խնայողությունը հաշվարկվում է՝ համեմատելով նոր և փոխարինվող սարքավորման էներգիայի(CO₂) սպառումը, իսկ լրացուցիչ սարքավորման դեպքում՝ համեմատելով յուրաքանչյուր միավոր արտադրանքի կամ ծառայության համար ծախսված էներգիայի հետ։
- *Վերականգնվող էներգետիկայի ոլորտում (ՎԷ) ներդրումներ*։ Կանաչ վարկերի այս խմբում կարելի է դասակարգել բոլոր այն ներդրումները, որոնք ուղղված են անձնական օգտագործման նպատակով վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի արտադրությանը, ինչպիսիք են քամին, արևը, կենսազանգվածները, երկրաջերմային էներգիան և ջուրը։

³ Տե՛ս **Arbidane, I., Khachatryan, N., Martirosyan, N.,** (2023) Issues of Accounting information disclosure for ecosystem services, *Economic, Finance and Accounting journal*, no 2, pp. 87-108., doi:10.59503/29538009-2023.2.12-87.

⁴ Տե՛ս ԳՀՀ Էներգաարդյունավետության ծրագիր ՄՓՄԶ-ների համար, Փուլ II, նոյեմբեր 2020, IPC, էջ 7։

- *Շրջակա միջավայրին նպաստող ներդրումներ (ՇՄՆ):* Բոլոր ներդրումները, որոնք անմիջական դրական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի պաշտպանության վրա, չնայած միշտ չէ, որ դրանք կարող են ունենալ չափելի էներգախնայողություն կամ ջերմոցային գազերի արտանետման կրճատումներ (օրինակ՝ էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններ):

Կանաչ ներդրումների խմբերի ցանկը ներկայացված է Հավելված 2-ում:

Կանաչ վարկերը նախատեսված են հետևյալ ներդրումների համար՝

- հիմնական միջոցների ձեռքբերում՝ ներառյալ շենքերի շինարարությունը,
- կանաչ շրջանառու միջոցների ձեռքբերում (ավելի քան 30 %): Շրջանառու միջոցների ձեռքբերումը համարվում է ընդունելի, եթե՝
 - դրանք ձեռք են բերվել կանաչ ապրանք արտադրելու նպատակով, որոնք հետագայում, կվաճառվեն որպես ԷԱ/ՎԷ ներդրում.
 - շրջանառու միջոց ձեռք բերող ընկերությունը պլանավորում է վերավաճառել դրանք իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր հանդիսացող վերջնական սպառողների որպես ԷԱ/ՎԷ ներդրում:
- Էներգետիկ ծառայություններ:


Կանաչ վարկի դասակարգման համար վարկի գումարի առնվազն 70%-ը պետք է ծախսվի ընդունելի կանաչ ներդրումների վրա, ինչը պետք է ստուգվի ֆինանսական կազմակերպության կամ էներգետիկ անկախ աուդիտորների կողմից: Ավելին, վարկը կարող է օգտագործվել նաև կանաչ ներդրումների իրականացման հետ կապված լրացուցիչ ծախսերի կատարելու համար: Ընդունելի լրացուցիչ ծախսեր են համարվում՝

- տեղադրման ծախսերը՝ ներառյալ նախապատրաստման ծախսերը,
- ներդրման հետ անմիջապես կապված անհրաժեշտ լրացուցիչ սարքավորումների ծախսերը,
- տեխնիկական շահագործման ստուգումների ծախսերը,
- ներդրման հետ անմիջապես կապված աշխատանքները:

Վարկի գումարի մնացած մասը (առավելագույնը 30 %-ը) կարելի է օգտագործել ոչ կանաչ շրջանառու միջոցների, ինչպես նաև ոչ կանաչ ապրանքների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ կատարելու նպատակով (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Կանաչ վարկավորման օգտագործման չափաբաժինները՝ ըստ ուղղությունների



Կանաչ վարկերի հիմնական պայմանները

Վարկի նվազագույն կամ առավելագույն գումարը, ժամկետը, գրավը և կանաչ վարկի տրամադրման հետ կապված այլ պայմաններն ու կանոնները սահմանվում են գործընկեր ֆինանսական կազմակերպություններում գործող ՄՓՄՁ-ների (միկրո, փոքր և միջին ձեռնարկություն) համար ստանդարտ վարկատեսակների պայմանների համաձայն: Օրինակ՝ համագործակցությունից ելնելով՝ պայմանները կարող են համապատասխանեն նաև KfW-ի (Գերմանական զարգացման բանկ) և ԳՀՀ-ի (Գերմանահայկական հիմնադրամ) կողմից սահմանված ընդհանուր հիմնական չափանիշներին (տե՛ս աղյուսակ 1):

Վարկի գումարը 500 միլիոն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհրաժեշտ է ԳՀՀ-ից ստանալ առանձին թույլտվություն: Այդ կապակցությամբ ԳՖԿ-ներին խորհուրդ է տրվում կապվել ԳՀՀ ներկայացուցիչների հետ նախքան նման վարկային հայտերի ուսումնասիրությունը: Վարկերը, որոնք կուղղվեն ԳՖԿ-ների կամ այլ ֆինանսական հաստատությունների կողմից նախկինում կանաչ ներդրումների ֆինանսավորման նպատակով տրամադրված վարկերի վերաֆինանսավորմանը, չեն կարող դիտարկվել որպես կանաչ վարկեր:

Աղյուսակ 1.

Կանաչ վարկավորման նախապայմանները⁵

Անվանում	Տեղեկություն
Վարկի նպատակը	Ներդրումներ, որոնք ապահովում են $\geq 20\%$ էներգախնայողություն և ՎԷ աղբյուրներից էներգիայի օգտագործում - Հիմնական միջոցներ (ներառյալ շինությունների կառուցում) - Շրջանառու միջոցներ - Էներգետիկ ծառայություններ
Թիրախային խմբերը	ՄՓՄՁ-ներ (ներառյալ գյուղատնտեսական կազմակերպություններ, ESCO ընկերություններ և կառուցապատողներ/շինարարական ընկերություններ)
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումարը	1 միլիարդ ՀՀ դրամ
Վարկի նվազագույն գումարը	1 միլիոն ՀՀ դրամ
Վարկի ժամկետը	սահմանվում է ԳՖԿ-ների կողմից
Տոկոսադրույքը	սահմանվում է ԳՖԿ-ների կողմից
Վարկունակության գնահատումը	սահմանվում է ԳՖԿ-ների կողմից
Գրավի վերաբերյալ պահանջները	սահմանվում է ԳՖԿ-ների կողմից

Եզրակացություն

Կանաչ վարկավորումը բանկերում կարևոր քայլ է դեպի կայուն տնտեսություն և շրջակա միջավայրի պաշտպանություն: Բանկերը, ներդրումներ անելով կանաչ նախագծերում և մշակելով պատասխանատու քաղաքականություններ, կարող են դառնալ սոցիալական պատասխանատու դերակատարներ, որոնք նպաստում են առողջ և կայուն ապագայի ստեղծմանը: Կանաչ վարկավորումը՝ որպես ֆինանսական միջոցների տրամադրման նոր ձև, նպատակ ունի աջակցել բնապահպանական բարելավմանը և կայուն զարգացմանն ուղղված նախագծերին: Այս մոտեցումը կարևոր դեր է խաղում էկոլոգիական խնդիրների լուծման մեջ՝ նպաստելով նորարարական էներգիայի, էներգետիկ արդյունավետության, կայուն գյուղատնտեսության և այլ բնապահպանական նախաձեռնությունների ֆինանսավորմանը:

Բնապահպանական ազդեցություն: Կանաչ վարկավորումն օգնում է նվազեցնել CO₂ արտանետումները և խթանում է ավելի կայուն տնտեսական համակարգերի զարգացումը:

⁵ Տե՛ս ԳՀՀ էներգրաադյունավետության ծրագիր ՄՓՄՁ-ների համար – Փուլ II, նոյեմբեր 2020, IPC, էջ 9:

Տնտեսական օգուտներ: Աջակցելով կանաչ նախագծերին՝ վարկավորման այս տեսակն օգնում է ստեղծել նոր աշխատատեղեր և ուժեղացնել տնտեսությունը:

Հանրային գիտակցություն: Կանաչ վարկավորումը խթանում է հասարակության շրջանում բնապահպանական գիտակցությունը և մարդկանց ներգրավվածությունը կայուն զարգացման գործընթացներում:

Ռիսկերի կառավարում: Կանաչ վարկավորման շրջանակներում կազմակերպությունները կարող են ավելի լավ կառավարել բնապահպանական ռիսկերը, ինչը բարելավում է դրանց մրցունակությունը:

Միջազգային համագործակցություն: Կանաչ ֆինանսավորումը կարող է խթանել երկրների միջև համագործակցությունը՝ նպաստելով գլոբալ կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

Այսպիսով՝ կանաչ վարկավորումը ոչ միայն ֆինանսական միջոցների տրամադրման մեթոդ է, այլ նաև ռազմավարություն, որը միավորում է տնտեսական, սոցիալական և էկոլոգիական շահերը՝ նպաստելով ավելի կանաչ և կայուն ապագայի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԳՀՀ Էներգրաադյունավետության ծրագիր ՄՓՄԶ-ների համար – Փուլ II, նոյեմբեր 2020, IPC:
2. **Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն.**, Կանաչ ձեռնարկատիրություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2024:
3. **Ճուղուրյան Ա., Գրիգորյան Լ.**, Կայուն զարգացման հաշվառում, ուս. ձեռնարկ, «Տնտեսագետ», 2004:
4. **Arbidane, I., Khachatryan, N., Martirosyan, N.**, Issues of Accounting information disclosure for ecosystem services, Economic, Finance and Accounting journal, 2023, no 2, pp. 87-108.
5. **Tshughuryan, A., Khachatryan, N.**, Ecosystem services financial management information security issues, History and politics, scientific journal, 2023, 2 (25), pp. 71-94.

ЗЕЛЕНОЕ КРЕДИТОВАНИЕ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ

Джемма Погосян

Предприниматели, занимаясь экономической деятельностью, всегда преследуют частные интересы. С одной стороны, они извлекают выгоду из конкурентного рынка и стремятся увеличить свой предпринимательский капитал. С другой стороны, они создают материальные блага или организуют услуги, способствуя удовлетворению растущих социально-экономических потребностей людей. Уже выдвигается общественный запрос на сохранение планеты Земля и заботу об окружающей среде. Это часто упускается из виду во время ведения бизнеса, вовлечённого в гонку за получением прибыли, и, к сожалению, не входит в рамки целей предпринимателей. Расширяется сфера инвестиций, ответственных перед обществом, изменяются форматы отчётов, публикуемых организациями. Это необходимо, чтобы все были проинформированы о том, насколько успешна деловая деятельность как с точки зрения частных интересов, так и с точки зрения общественных ожиданий. Внешние бенефициары уже заинтересованы в оценках устойчивого развития организации, и если они не облада́живают, то в организации возникают риски потери деловых партнёров и ослабления конкурентных позиций на рынке.

Ключевые слова: банк, зеленое кредитование, зеленое предпринимательство, корпоративная социальная ответственность.

GREEN LENDING IN THE COMMERCIAL BANKS

Jemma Poghosyan

Entrepreneurship has traditionally been seen as a way to create material wealth, generate additional profits, and improve people's well-being. Entrepreneurs, engaged in economic activities, always pursue private interests. On the one hand, they profit from entering competitive markets and seek to increase their entrepreneurial capital; on the other hand, they create material goods or organize services that contribute to meeting the growing socio-economic needs of society.

However, in using entrepreneurial services, society is increasingly making public demands for the preservation of the planet and care for the environment—

concerns that are often overlooked in the race to make a profit and, unfortunately, are not always within the scope of entrepreneurial goals. Today, economic activity is rapidly shifting toward sustainable entrepreneurship. People are actively applying management tools that promote sustainability in business. The scope of investments with a responsibility to society is expanding, and the formats of reports published by organizations are changing, so that everyone is informed about how successful business activities are, both from the perspective of private interests and from the perspective of public expectations.

Both internal and external stakeholders of economic activity are already interested in assessments of an organization's sustainable development. If these assessments are not encouraging, the organization risks losing business partners and weakening its competitive position in the market.

Keywords. *bank, green lending, green entrepreneurship, corporate social responsibility*

CHALLENGES OF GREEN MARKETING IN ARMENIA

Syuzanna Khachatryan

“Management” specialization

Forth year of bachelor’s degree, Northern University

syuzannakhachatriann@gmail.com***Abstract***

Green marketing in Armenia is at the initial stage of development, facing a number of challenges, such as the lack of environmental awareness of the public, the high price of eco-products and the lack of legislative regulations. These issues often lead to reduced demand and misleading marketing. Limited availability of green technologies prevents businesses from switching to sustainable products and processes. Public awareness programs and government support are needed in the direction of climate change, forest restoration and reforestation to promote steps towards sustainable development of the country.

Keywords: *Green marketing, ecological products, public awareness, green technologies, misleading marketing (green washing).*

Green marketing, which aims to promote environmentally friendly products and practices, is becoming an important part of modern business around the world. It contributes to sustainable development and environmental protection, but this sector is still at an early stage of development in Armenia. Despite global trends towards eco-interest, there are a number of problems that hinder the development and effectiveness of green marketing in Armenia.

In the 21st century, one of the main problems of green marketing in Armenia is the lack of public awareness of environmentally friendly products and their benefits. Many consumers are not aware of how ecological products contribute to the preservation of the environment and their health. Because of the lack of awareness, the demand for eco-products is low, as people often prefer affordable products rather than eco-friendly ones⁶. Apart from that, Armenia

⁶ Yerevan Municipality

<https://www.yerevan.am/en/news/erewani-k-aghak-apetarane-miats-el-e-aghbi-tesakavorman-ow-veramshakman-recycle-it-tsragrin/>

lacks a strong legal framework regulating green marketing or certifications that would oblige companies to comply with products to give "green" or "environmentally friendly" inscriptions. This lack allows for misleading marketing (greenwashing), where some companies can present their products as "environmentally friendly" without following the relevant standards.

Another important issue is price sensitivity among armenian consumers. Eco-friendly products are usually more expensive due to the cost of sustainable materials and manufacturing processes. However, many consumers in Armenia are more focused on the price than the environmental impact of the product.

Adopting green practices for Armenian businesses often requires access to innovative technologies that are not widely available or affordable domestically. High on the introduction of environmentally friendly technologies and the use of sustainable practices costs are an obstacle, especially for small and medium-sized businesses. Without government support or financial incentives, many companies find it difficult to transition to more sustainable processes, which limits the extent of green marketing.

In addition, the government has not created a public policy framework that will promote the growth of green sectors. Without government initiatives, buesses have no motivation to invest in green marketing, and society is not driven by sustainable consumption⁷.

Steps of environmental sustainability in Armenia

In recent years, Armenia has implemented a number of initiatives aimed at sustainable development and solving environmental problems. Below I present the main steps towards environmental sustainability that have been or are being implemented in Armenia.

1. Reforestation and tree planting

Forests in Armenia are among the most endangered ecosystems. Loss of valuable forest areas is observed due to overexploitation of forests, unregulated logging, grazing, land grabbing and other reasons. Species composition and structural changes occur in forests, stands lose their ability to regenerate naturally and their productivity decreases.

A large number of countries have already developed and started implementing national standards and indicators for sustainable forest

⁷ Prokopenko O.V., Ossik Yu.I., Green marketing: Teaching manual, Karaganda: KSU Publishing House, 2015.

management. Armenia is also developing its own standards and indicators. In recent years, some works aimed at the issues of biodiversity, forests of High Environmental Importance, ecosystem services and climate change, as well as implementation of forest management information systems, forest management planning and improvement of forest monitoring have been carried out in Armenia. Currently, within the framework of the UNDP-GEF project "Introduction of sustainable land and forest management in the mountainous landscapes of North-Eastern Armenia", revision of forest management plans of 10 forestry enterprises of Lori and Tavush is being carried out⁸.

Among others, this work highlights issues of biodiversity and forests of High Environmental Importance. Armenia, which has suffered for decades from deforestation, today implements a number of projects aimed at reforestation and the spread of new tree planting. There are many government and public programs aimed not only at increasing forest cover, but also at restoring the vitality of ecosystems. The "10 million trees" initiative was an important step in this direction, aimed at preventing the loss of forest resources.

2. Waste management and recycling

Waste management continues to be a major problem in Armenia, but in recent years some progress has been made in this area. There are a number of programs and projects aimed at promoting a recycling culture and reducing waste. In particular, the introduction of new recycling plants and anti-plastic initiatives are supporting Armenia's transition to sustainable waste management.

In Armenia, as everywhere, there are many garbage problems caused by human activities, starting from the amount of garbage and its reduction to garbage collection, neutralization and utilization. Volumes of solid waste generation in the country are mainly determined by population, economic level, climate and population lifestyle. In general, the awareness of the importance of waste reduction, sorting, recycling culture and practices in Armenian society is still low. In addition, the level of municipal solid waste management services is low, which causes social, environmental and general sanitation problems. The existing national strategy with its action plan is implemented incompletely and slowly, mainly because of the lack of financial and administrative resources. The

⁸ Standards and indicators of sustainable forest management in Armenia in 2017
https://unece.org/DAM/timber/meetings/20170913/ARM-yerevan13-15sept2017_Report-armenian.pdf

works carried out so far are superficial and do not include all layers of society, nor have they ever been carried out in the entire territory of the republic.

3. Fight against climate change

Today there is a lot of talk about climate change, which is already noticeable around the world. During about half a century, the result of human activity was that the amount of greenhouse gases in the atmosphere increased significantly, which left a big mark on climate change.

Over the past 130 years, global temperatures have risen by about 0.85 degrees. Global warming has accelerated significantly over the past 25 years. Sea levels are rising, glaciers are melting, precipitation patterns are changing. Natural disasters are becoming more intense and frequent. Extreme weather phenomena have become more pronounced: warm winters, hot summer days, floods, etc⁹.

Naturally, Armenia could not be left out of global ecological processes. Climate changes have not gone unnoticed for our country either. In recent years, the temperature has increased by about 1.3 degrees, desertification areas have expanded, rivers have become scarce, and the number of forest fires is also unprecedented, which greatly damaged the biodiversity of Armenia.

Armenia has joined international agreements on climate change, including the Paris Agreement. Armenia is committed to reducing carbon dioxide emissions and promoting energy efficiency. In order to mitigate the impact of climate change, a number of programs are being implemented to develop hydropower, solar energy, and alternative energy sources.

4. Sustainable development of agriculture

Agriculture is one of the main sectors of Armenia's economy, and it is highly dependent on natural resources: land, water and vegetation. The promotion of sustainable agricultural methods and the use of innovative technologies contribute to the improvement of soil quality, water conservation and biodiversity conservation. There are agricultural programs aimed at promoting environmentally friendly production and efficient use of natural resources. It is the main source of economic activity in rural areas and makes a significant contribution to the country's gross domestic product. The share of agriculture in the GDP (as of 2018) was 13.7 percent, and it provides employment

⁹ Amberd Analysis 2022
<https://enlightngo.org/post/27830>

for 24.8 percent of the country's working population, of which 52.1 percent are women. The latter are disproportionately involved in seasonal and precarious employment, and 82.1 percent of women involved in agriculture work informally.

5. Public awareness and education programs

In Armenia, great importance is attached to educational and awareness programs to increase public awareness of environmental issues. Various non-governmental organizations and government bodies carry out educational and public awareness campaigns aimed at the formation of environmentally responsible behavior. Schools and universities are increasingly incorporating environmental programs aimed at educating new generations about sustainable development.

One such campaign is the "Recycle it!" the program is aimed at reducing waste in Armenia, as well as developing environmental education. The main goals of the initiative are to encourage waste sorting and recycling, create new business opportunities in the field of waste management, raise public awareness of the importance of recycling and reuse, and promote environmental education in Armenia¹⁰.

And another very important campaign that will save not only Armenian forests, but also the whole world. The company BioPaulownia was created for solving ecological problems, increasing and preserving green areas. The main goal of the campaign is to offer 3 types of ecologically clean and harmless bio fuel created by him. 1 - ethanol (E85-100), will replace gasoline and gas 2 - pallets, will be used for agricultural purposes 3 - Bio coal, will be used for heating the house, in agriculture. Bio fuel will replace gasoline and to gas (and later to diesel), which will make it possible to preserve not only natural resources, but also to save money and protect our planet from global warming, etc.

Conclusion

For the development of green marketing in Armenia, it is necessary to overcome a number of problems. Here are the important directions of their solution.

¹⁰ World Wide Fund for Nature (WWF)

https://www.wwf.am/our_work_armenian/climate_energy_armenian/mitigating_impacts_of_climate_change_armenian/

1. Increasing public awareness

It is necessary to raise public awareness of the importance of ecological products and their benefits through educational programs, public campaigns and campaigns.

2. Legislative regulations and standards

Provide an appropriate legal framework and standards for green products, obliging companies to follow proven green practices and reduce the incidence of misleading marketing.

3. State support and incentive programs

The government can provide tax and financial incentives, especially to small and medium-sized businesses, to enable them to invest in sustainable technologies.

4. Development of local products and technologies

Provide access to ecological technologies that contribute to the creation of more affordable and environmentally friendly products.

5. Revision of pricing policy

Develop mechanisms that will help reduce the prices of ecological products, making them more competitive and available for the Armenian consumer.

These steps will contribute to the sustainable development of green marketing in Armenia, increase ecological awareness and contribute to the preservation of the environment.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Amberd Analysis 2022
2. <https://enlightngo.org/post/27830>
3. Yerevan Municipality <https://www.yerevan.am>
4. Prokopenko O.V., Ossik Yu.I., Green marketing: Teaching manual. — Karaganda: KSU Publishing House, 2015.
5. Standards and indicators of sustainable forest management in Armenia in 2017
6. https://unece.org/DAM/timber/meetings/20170913/A_RM-yerevan13-15sept2017_Report-armenian.pdf
7. World Wide Fund for Nature (WWF)
8. https://www.wwf.am/our_work_armenian/climate_energy_armenian/mitigating_impacts_of_climate_change_armenian/

ԿԱՆԱՉ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Սյուզաննա Խաչատրյան

Հայաստանում կանաչ մարքեթինգը գտնվում է զարգացման սկզբնական փուլում՝ բախվելով մի շարք մարտահրավերների, ինչպիսիք են հասարակության էկոլոգիական իրազեկվածության պակասը, էկոարտադրանքների բարձր գինը և օրենսդրական կարգավորումների բացակայությունը: Այս խնդիրները հաճախ հանգեցնում են նվազեցված պահանջարկի և մոլորեցնող մարքեթինգի դեպքերի: Կանաչ տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիությունը խոչընդոտում է բիզնեսներին անցնել կայուն արտադրանքի և գործընթացների: Կլիմայի փոփոխության, անտառների վերականգնման և վերամշակման ուղղությամբ անհրաժեշտ են հանրային իրազեկման ծրագրեր և պետական աջակցություն՝ երկրի կայուն զարգացմանն ուղղված քայլերը խթանելու համար:

Հիմնաբառեր՝ կանաչ մարքեթինգ, էկոլոգիական արտադրանքներ, հասարակության իրազեկվածություն, կանաչ տեխնոլոգիաներ, մոլորեցնող մարքեթինգ:

ПРОБЛЕМЫ ЗЕЛЕННОГО МАРКЕТИНГА В РА

Сюзанна Хачатрян

Зеленый маркетинг в Армении находится на начальном этапе развития и сталкивается с рядом проблем, таких как недостаточная экологическая осведомленность населения, высокая цена экопродукции и отсутствие законодательного регулирования. Эти проблемы часто приводят к снижению спроса и вводящему в заблуждение маркетингу. Ограниченная доступность зеленых технологий не позволяет предприятиям переходить на устойчивые продукты и процессы. Программы информирования общественности и государственная поддержка необходимы в направлении изменения климата, восстановления лесов и лесовосстановления, чтобы продвигать шаги к устойчивому развитию страны.

Ключевые слова: *зеленый маркетинг, экологические продукты, осведомленность общественности, зеленые технологии, вводящий в заблуждение маркетинг (зеленое промывание).*

ԿԱՆԱԶ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մերի Հովհաննիսյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,

«Հաշվապահական հաշվառում և հարկում»

բակալավրիատ, չորրորդ կուրս

hov.mery@gmail.com

Համառոտագիր

Հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսության գլխավոր բաղադրիչն է: Ներկայումս որքան էլ ջանքեր ուղղվեն վերականգնվող էներգիայի աղբյուրների բացահայտման և էներգախնայողության, ռեսուրսների երկրորդային օգտագործման, թափոնների վերամշակման միջոցների ընդլայնման և տեխնոլոգիական արդյունավետության բարձրացման ուղղությամբ, տարբեր հարթակներում շարունակ բարձրաձայնվեն շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող խնդիրները, այնուամենայնիվ, մարդկության թվի աճը, ինչպես նաև ավելացող միջազգային սպառման ծավալները հանգեցնում են արդյունահանվող հանքահումքային ռեսուրսների մեծ մասի տարեկան ծավալների կայուն աճի: Հանքարդյունաբերական արտադրանքի, ներմուծման, արտահանման և փոխարժեքի միջև կապվածության գնահատականը ցույց է տվել, որ այս ոլորտի զարգացման ներուժը դրականորեն է ազդում արտաքին առևտրի վրա՝ անկախ փոխարժեքային տատանումներից:

Հոդվածում վերլուծվել է հանքարդյունաբերության դերակատարումը ՀՀ տնտեսությունում և այն հիմնական միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն հանքարդյունաբերության ոլորտը զարգացնելու համար՝ միաժամանակ չվնասելով շրջակա միջավայրը:

Հիմնաբառեր՝ հանքարդյունաբերություն, պղնձամոլիբդենային պաշարներ, հանքարդյունաբերության զարգացում, կանաչ տնտեսություն, տնտեսության զարգացում

Հանքարդյունաբերությունը Հայաստանում արդյունաբերության և արտահանման մեջ խոշորագույն ավանդ ունեցող ոլորտներից մեկն է:

Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտը երկար պատմություն ունի՝ սկսած 18-րդ դարի վերջերից, երբ Լոռու մարզի Ալավերդու շրջանում սկսեցին պղինձ արդյունահանել: Պղինձ հայտնաբերվել է նաև Սյունիքի մարզում՝ Կապանում, որտեղ պղնձի արդյունահանումն սկսեցին 19-րդ դարի կեսերին, և այսօր էլ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը հիմնականում կենտրոնացված է այս երկու մարզերում:

Հանքարդյունաբերությունը համարվում է աշխարհի հինգերորդ խոշորագույն արդյունաբերությունը, և որպես ռեսուրս-ինտենսիվ ու էկոլոգիապես զգայուն արդյունաբերական ճյուղ՝ այն կարող է մեծապես նպաստել երկրների տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում մեծ կարևորություն է ունի օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը: Իսկ ներդրումների առումով հանքարդյունաբերության ոլորտն աշխարհում ամենապահանջվածներից է և պահանջում է բարենպաստ միջավայր:

1. ստանդարտների առկայություն,
2. բարենպաստ աշխարհաքաղաքական միջավայր:

Ստանդարտների միջոցով սահմանվում են գործունեության տարբեր ձևերին կամ դրանց արդյունքների վերաբերող համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ ուղղված որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռքբերմանը, որը մշակվում է փոխհամաձայնության հիման վրա և հաստատվում ճանաչված մարմնի կողմից¹:

Բարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակը տվյալ երկրի քաղաքական դրությունն է, որի վրա մեծ ազդեցություն են ունենում պետական կառավարման համակարգը, հարկային վերահսկողությունը, քաղաքական իրավիճակը, միջազգային առևտրային փոխհարաբերությունները և այլն: Այս երկու գործոնների հետևողական և անընդհատ աշխատանքը բարձրացնում է ներդրողների վստահությունը և նպաստում ներդրումների ավելացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտում ներդրումներ կատարելը բավական շահութաբեր է, սակայն հանքարդյունաբերության ոլորտում ներդրումներ կատարելը նաև ունի իր բացասական կողմերը:

¹ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը (ընդունված է 2012 թվականի փետրվարի 8-ին). <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74337>:

1. Հանքարդյունաբերությունը համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը մեծամասամբ պայմանավորված է անորոշություններով, որոնք ոլորտային ընկերություններին ուղեկցում են հանքահումքի արդյունահանման բոլոր փուլերում:

2. Հետախուզական աշխատանքներից մինչև արդյունահանում պահանջվում է 10-15 տարի, և հետազոտությունները միշտ չեն, որ տալիս են սպասված արդյունք: Այսինքն՝ փոքր ներդրումները, որոնք իրականացվել են հետախուզության վրա, չեն բերում ավելի մեծ ներդրումների, որոնք հետագայում իրականացվելու են:

3. Հայաստանի Հանրապետությունն ունի տրանսպորտային հաղորդակցության բավական լուրջ խնդիր և ամենակարևոր գործոնը, որն ազդում է ներդրումների իրականացման վրա, տեղափոխման լոգիստիկ ծախսերն են: Վերջերս կառավարության կողմից լայնորեն քննարկվող Խաղաղության խաչմերուկի իրականացումը կարող է լուծել այդ խնդիրը, քանի որ կստեղծվեն միջազգային հաղորդակցության ուղիներ Հայաստանի Հանրապետության հետ, ինչը մեծապես կկրճատի տրանսպորտային ծախսերը, հետևաբան նաև կբարձրացնի ներդրումային գրավչությունը: Ներդրումների հետ վերադարձն անմիջականորեն կապված է շահութաբերության հետ, իսկ շահութաբերության վրա մեծ ազդեցություն ունեն տրանսպորտային ծախսերը:


4. Հանքարդյունաբերական ոլորտում ներդրումային միջավայրի գնահատման համար հաշվի են առնվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես է հանքի տնօրինությունը վերաբերվում շրջակա միջավայրի պահպանության ու սոցիալական պատասխանատվության հիմնահարցերին, առկա են արդյոք ժամանակակից այնպիսի մաքրման սարքեր, որոնք թույլ չեն տալիս վնաս հասցնել ինչպես աշխատակիցների առողջությանը, այպես էլ մոտակա բնակավայրերի բնակչությանը և նմանատիպ այլ հարցեր:

Հանքարդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար կարևոր ոլորտներից մեկն է: Թեպետ ոլորտի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ փոքր է, և այն կարող է կազմել 2-3 տոկոս, սակայն նրա արտադրանքի արտահանումից ստացվող եկամուտները տնտեսության համար մշտապես էական նշանակություն ունեցող ուղղություն է դիտարկվում: Հանքարդյունաբերությունն արտահանման մեկ երրորդն է ապահովում, այսինքն՝

հանքարդյունաբերությունը մեր երկիր արտարժույթ բերող հիմնական ոլորտներից մեկն է եղել վերջին տարիներին (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1.

ՀՀ-ից արտահանվող հիմնական մետաղները²



Հանքարդյունաբերությունը Հայաստանում կայացած ոլորտ է և, ինչպես երևում է աղյուսակ 1-ից, զարգացման տեմպեր է գրանցում: Թեև վերջին երկու տարիներին մի փոքր արտադրության ծավալների անկում է նկատվել, ինչը պայմանավորված է պղնձի խտանյութի արդյունահանման ծավալների նվազմամբ, այն նվազել է 8,4 տոկոսով, ցինկինը՝ 19,8 տոկոսով: Այստեղ նվազում է գրանցվել մի քանի գործոնով պայմանավորված, օրինակ՝ անցած տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ իր գործունեությունն է դադարեցրել Թեղուտի հանքավայրը: Բացի այդ՝ Հայաստանից արտահանվում էր նաև Արցախի Կաշենի հանքավայրի պղինձը, ինչը, բնականաբար, ևս չի կատարվում: Բայց ուսումնասիրելով 2024 թ.-ի հունվար-օգոստոս ամիսների հանքագործական արդյունաբերության արտադրության ծավալները՝ կարող ենք փաստել, որ 2024 թ.-ին արտադրության ծավալների աճ կգրանցվի:

² Տե՛ս UN Comtrade Database. <https://comtradeplus.un.org/TradeFlow>

Աղյուսակ 1

Հանքագործական արդյունաբերության արտադրության ծավալներն
ըստ գործունեության տեսակների³

	2019	2020	2021	2022	2023
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, մլն դրամ	32849.8	39935.9	49656.6	42281.1	35061.6
Մետաղական հանքաքարի արդյունահանում, մլն դրամ	31466.7	38115.2	48078.5	38932.3	32887.6
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր, մլն դրամ	1327.0	1810.7	1529.0	3348.8	2174.0
Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն, մլն դրամ	56.1	10.0	49.1	-	-

Հայաստանի հանքարդյունաբերության կայուն զարգացման ռազմավարական ուղու մշակման համար հիմք է ծառայում ՀՀ կառավարության կողմից առաջադրված հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը՝ որպես համապարփակ և համակողմանի ձևակերպված սահմանում:


Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի հիմնական ուղենիշն օգտակար հանածոների՝ տնտեսապես արդյունավետ,

³ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե.
<https://www.armstat.am/am/>

ողջամիտ և համալիր շահագործման, ինչպես նաև սերունդների հանդեպ պատասխանատվության (այդ թվում՝ բնապահպանական ռիսկերի կառավարման) նպատակների համակցմամբ գործունե համակարգի ապահովումն է: Այն թույլ կտա իրացնել երկրի բնական պաշարների ներուժը՝ առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտների ստացման, դրանց արդյունավետ բաշխման և երկարաժամկետ կայուն զարգացման ակնկալիքով: Պատասխանատու և միաժամանակ ներդրումային նպաստավոր համակարգի առկայության համար անհրաժեշտ է յուրաքանչյուր կարգավորման դեպքում հավասարակշռել պետության, մասնավոր հատվածի և հանրության տարբեր շահառու խմբերի շահերը, ինչպես նաև սահմանել յուրաքանչյուր դերակատարի իրավունքները և պարտականությունները⁴:

Գծապատկեր 2.

Ռազմավարության հայեցակարգը. տեսլականից մինչև իրականացում



Իսկ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը (տե՛ս գծապատկեր 2) հիմնված է մի շարք ուղենշային սկզբունքների վրա, որոնց պետք է հետևել հետագա բոլոր հայեցակարգային որոշումները կայացնելիս, ինչպիսիք են⁵.

⁴ Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն (մինչև 2050թ.), Երևան, 2022, էջ 24:

⁵ Նույն տեղում:

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին,

2. հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը,

3. հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև զուտ դրական ազդեցություններ ձևավորելը,

4. հանքարդյունաբերության ոլորտը պետք է դիտարկվի այլընտրանքային գործունեության դեպքում ձևավորվող արժեքը,

5. հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ՀՀ տնտեսության դիմակայունությանը,

6. հանքարդյունաբերության ոլորտում պետք է հստակ սահմանված լինեն մասնակիցների դերերն ու գործունեության կանոնները,

7. հանքարդյունաբերության ոլորտում, առավել քան տնտեսության այլ ճյուղերում, կարևոր է միջազգային համատեքստը,

8. հանքարդյունաբերության ոլորտը պետք է առաջնորդվի կայուն զարգացման օրակարգով:

Եզրակացություն

Հանքարդյունաբերությունը դեռևս 18-րդ դարից սկսած մեծ դեր է ունեցել Հայաստանի տնտեսության մեջ: Տարիների ընթացքում նոր հանքերի հայտնաբերումն ու շահագործումը ընդլայնել են հանքարդյունաբերության ոլորտը և տեղական արտադրանքը արդյունահանվել է նաև աշխարհի տարբեր երկրներ: Հանքարդյունաբերության զարգացումը նպաստել է գործազրկության նվազմանը և հարկերի հաշվին պետական բյուջեի ավելացմանը, որոնք տնտեսության զարգացման կարևոր գործոն են: Սակայն, շահագործմանը զուգահեռ, չպետք է մոռանալ շրջակա միջավայրին հնարավորինս քիչ վնաս հասցնելու մասին: Հետևելով օդի մաքրության ապահովման համար Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի օրինակին՝ կարելի է տեղադրել ջրցան թնդանոթներ, որոնք կարողանում են մաքրել մինչև 2 հա տարածք, ինչպես նաև հետևողականորեն առաջնորդվել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության պլանով, ինչը հնարավորություն կտա խելամիտ կերպով զարգացնել հանքարդյունաբերության ոլորտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը (ընդունված է 2012 թվականի փետրվարի 8-ին):
2. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե:
3. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն (մինչև 2050 թ.), Երևան, 2022:
4. UN Comtrade Database, <https://comtradeplus.un.org/TradeFlow>
5. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74337>
6. <https://www.armstat.am/am/>

РОЛЬ ЗЕЛЕННОЙ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ЭКОНОМИКЕ РА

Мери Оганесян

Горнодобывающая промышленность является основной составляющей экономики Армении, основным фактором экономического развития и составляет более половины экспорта Армении. В настоящее время, сколько бы усилий ни направлялось на выявление возобновляемых источников энергии и энергосбережение, вторичное использование ресурсов, расширение мощностей по переработке отходов и повышение технологической эффективности, вопросы охраны окружающей среды продолжают подниматься на различных площадках, однако рост численности населения, а также растущие объемы международного потребления приводят к устойчивому росту годовых объемов большинства добываемых полезных ископаемых. Оценка взаимосвязи между добычей полезных ископаемых, импортом, экспортом и обменными курсами показала, что потенциал развития этой отрасли положительно влияет на внешнюю торговлю, независимо от колебаний обменного курса.

Изучена роль горнодобывающей промышленности в экономике РА и основные меры, которые следует предпринять для развития горнодобывающей промышленности. не нанося вреда окружающей среде.

Ключевые слова: добыча полезных ископаемых, запасы меди и молибдена, развитие горнодобывающей промышленности, зеленая экономика, экономическое развитие.

THE ROLE OF GREEN MINING INDUSTRY IN RA ECONOMY

Mery Hovhannisyan

Mining is the main component of Armenia's economy, the main factor of economic development and accounts for more than half of Armenia's exports. Currently, no matter how many efforts are directed towards the identification of renewable energy sources and energy saving, secondary use of resources, expanding waste processing facilities and increasing technological efficiency, environmental protection issues continue to be raised on various platforms, however, the increase in the number of people, as well as the increasing volumes of international consumption lead to steady growth of the annual volumes of most mined mineral resources. An assessment of the relationship between mining output, imports, exports and exchange rates showed that the development potential of this sector positively affects foreign trade, regardless of exchange rate fluctuations.

The purpose of the article is to study the role of the mining industry in the RA economy and the main measures that should be taken to develop the mining industry, while not harming the environment.

Keywords. *mining, copper-molybdenum reserves, mining development, green economy, economic development.*

CHALLENGES OF GREEN ENTREPRENEURSHIP IN RA METAL MINING INDUSTRY

Sofi Tshughuryan

American University of Armenia

“Engineering, Environment and Sustainability sciences” specialization,
first year of bachelor's degree

sofi.juguryann@gmail.com

Abstract

The demand for green entrepreneurship is particularly prominent in the metal mining industry, where enormous environmental damage is done. However, on the other hand, countries cannot abandon metal mining, as it is not only an economically profitable sector, but also has a high demand for its own products in the market. Therefore, at present, the issue is to transfer this traditional business to the field of green entrepreneurship as much as possible. The article suggests ways to support the transformation of the RA metal mining industry towards green entrepreneurship. In particular, they are related to the use of fiscal policy stimulating green entrepreneurship, improving the accountability of corporate social responsibility of organizations, as well as the use of innovative technologies in the RA metal mining industry.

Keywords: *green entrepreneurship, metal mining, mining risks, sustainable development, corporate social responsibility.*

The challenges of green entrepreneurship were formed in the 70s of the last century, when it became clear, that the relentless exploitation of the soil, the pollution of the surrounding environment will cause catastrophic damage to the planet earth, which will no longer be possible to compensate or restore. even with the super profits received as a result of business. It became obvious, that the activity contributing to the positive growth of people's socio-economic level, at

the same time contains negative environmental risks, the mismanagement of which leads to irreparable damages and future instability⁶.

The challenges of green entrepreneurship are particularly evident in the metal mining industry, where open pit mining leads to landscape degradation, air pollution, and the formation of tailings that pose significant environmental risks.

The mining industry of Armenia began at the end of the eighteenth century, when copper was mined in Alaverdu of Lori region. Copper was also found in Kapan of Syunik region, where copper mining began in the mid-nineteenth century, and today, mining of metallic minerals is mainly concentrated in these two regions RA. The main mineral resources are copper, gold, molybdenum and polymetals (lead and zinc). Currently, the largest mine is operated by Zangezur Copper-Molybdenum Combine CJSC (ZPMK) and is located in Kajaran (Syunik region). It is a copper-molybdenum mine, the exploitation of which began in the middle of the 20th century, and at the moment it provides more than half of the total output of the mining industry in Armenia.

Table 1

The structure of RA industrial output by types of economic activity (%)⁷

Types of economic activity	2018	2019	2020	2021	2022
The whole industry	100	100	100	100	100
Mining industry	15.5	17.1	19.2	24.4	18.5
Manufacturing industry	69.8	69.6	67.5	63.1	68.5
Electricity production	13.4	12.1	12.3	11.5	12.0
Waste processing	1.3	1.2	1.0	1.0	1.0

⁶ **Magon, Renata Bianchini**, Sustainability and Performance in Operations Management Research. Journal of Cleaner Production, vol. 190, Elsevier Ltd, pp. 104–17, doi:10.1016/j.jclepro.2018.04.140.

⁷ **Source:** RA NSS yearbook, 2023, p. 318.

Mining is an established sector in Armenia and is experiencing rapid development (see Table 1). However, it is currently recorded, that the development of the mining industry in Armenia can proceed in the following main ways: either continue to operate in its current form, or transform in accordance with international standards, with a competitive and attractive investment environment in foreign markets, stable operational and responsible mining based on the concept of development⁸.

Table 2

Generation, use and disposal of waste in RA organizations (1000 t)⁹

Indicators	2018	2019	2020	2021	2022
Occurred	67 146.2	67 418.0	73 389.2	88 248.6	79 088.1
It has been used	1 603.6	722.0	903.1	631.1	704.3
Disposed	1.7	0.9	0.7	1.5	22.0

According to the concept of management of natural resources of the Republic of Armenia, the supply of various metallic minerals of the existing mining organizations is as follows:

- a. with copper-molybdenum ore - about 100-120 years,
- b. with gold ore - about 25-30 years,
- c. with lead-zinc (multimetallic) ore - about 20-25 years.

Out of the 44 metal mineral deposits registered in the state balance sheet of mineral reserves, only 23 mines (sites) have been provided with the right to subsurface mining, and only in 2021 13 of the 23 mines were provided by extracting a total of about 33.5 million tons of ore ¹⁰.

⁸ Strategy for the development of the mining industry (until 2035), Government decision N 730-Ղ of the RA May 11, p. 9, 2023.

⁹ **Source:** RA NSS yearbook, 2023, p. 256.

¹⁰ Decree of the President of the Republic of Armenia dated 15.07.2017 N HK-100-A on approving the concept of the management of natural resources of the Republic of Armenia.

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=90718><http://www.irtek.am/views/act.aspx?aid=90718>

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=90718>

At the same time, it should be emphasized, that the waste management system in Armenia is still not implemented at a proper level, which has a negative impact on the assessment of green entrepreneurship (see table 2). Over the years, the majority of industrial waste is not processed and included in the circular economy system. Furthermore, the majority of hazardous waste is not treated, which is particularly typical of metal mining, where environmentally damaging tailings are formed¹¹.

In addition, mining activities have a large impact on the environment, such as:

Mountain capital works, including:

- construction of the construction site,
- construction of approach roads,
- construction of buildings and production sites,
- construction of tailings,
- fuel, lubricants and materials warehouses,
- temporary warehouses of explosives,
- parking lot for construction equipment and motor vehicles.

Cleaning works, including:

• earthworks, which are carried out using equipment (excavators, bulldozers, trucks, etc.),

- drilling and mechanical crushing,
- drilling and blasting,
- placement of external fillings.

Mining and processing of ore.

• drilling and mechanical crushing,

• drilling and blasting,

• extraction and transportation of ore to the processing hub (crushing plant, beneficiation factory),

- ore crushing, screening.

Ore processing:

- extraction of metals,
- transportation and accumulation of tailings,

Mine closure and conservation.

¹¹ **Young Paul**, Top 10 business risks and opportunities for mining and metals in 2024, <https://ca.linkedin.com/in/paul-young-055632b>

- dismantling of construction sites and structures,
- technical and biological reclamation of external fill,
- technical and biological reclamation of mine cavities.

In this sense, environmental risks are formed that harm the environment. The main ones are¹²:

- Destruction of vegetation in the areas of the mine, external backfill, production buildings and infrastructures,
- Transportation of the fertile layer of soil in the areas of the mine, external backfill, production buildings and infrastructures, which will cause partial damage to the extracted soil,
- Changes in the living conditions of animals and destruction of partially sensitive biocenosis,
- Emissions and spread to natural landscapes and residential areas as a result of the operation of mining equipment,
- Emissions and spread to natural landscapes as a result of blasting operations carried out for the purpose of crushing rocks.
- Emissions and spread to natural landscapes and residential areas as a result of rock crushing and grinding,
- Emissions of diesel fuel combustion products,
- Pollution of surface flows by rocks scattered in the area of the mine.

Fiscal policy is one of the risk prevention tools of green entrepreneurship, when taxes are levied by the state for the restoration of mining damage to the environment. However, it is mentioned in the professional literature, that the rates of environmental protection and natural use fees in the field of metal mining are not considered to be negligible for the damage caused¹³.

Risks of environmental pollution as a result of metal mining are not prevented as a result of incomplete taxation for waste.

Mining waste constitutes more than 9.9% of all industrial waste generated in RA, but according to the law on rates of environmental fees, a zero rate is set for the disposal of the aforementioned waste, unlike other industrial waste, for

¹² **Muradyan S.**, Methodological approaches to effective tax policy, "Alternative" scientific journal, N 2, April-June, 2018, p. 382-388.

¹³ **Muradyan S., Znotina D.**, Theoretical aspects of fiscal policy in the mining sector, Journal of social sciences "Latgale National Economy Research", N 1(11), November 2019, pp. 117-124.

which fees are from 4 for class 1 up to 1500 drams to 48,000 drams/ton respectively, for non-hazardous waste - 600 drams/ton and for non-hazardous waste caused by the demolition and construction of land cover - at a rate of 60 drams/ton. Subsoil-using organizations were actually released from the obligation to pay environmental fees for placing mining waste in the environment, because the said waste received other legal names: "dumps", "technical mines", etc.

Moreover, in Armenia, mining waste is left under the management of the state, because there are still many minerals that the state can redirect to exploitation, but with this legal arrangement, in practice, the soil for the negative socio-economic consequences caused by mining waste by the exploiters increases. the risk of avoiding responsibility.

According to various calculations, the currently used compensation amounts for land use and environmental fees are lower than the actual damage by more than 32-40 times. In particular, for the purpose of economic development, the further application of environmental fees and privileges of zero or lower rates for the use of resources for some sectors is highly risky.

It should also be noted that the lack of a "Social Contract" with the community also hinders the development of green entrepreneurship in the metal mining industry. The public sector - civil society dialogue system is not established, the trust towards the public sector and subsoil users is low. There is a lack of effective community-subsoil user relationship, a general agreement for making decisions on the directions of socio-economic development of communities, and a system of participatory monitoring by communities during the activities of subsoil-using companies, which is a legal requirement in international practice.


In this sense, green entrepreneurship also requires the activation and transparency of social measures, whatever they may be:

- Providing information on the form of dialogue between the company and the local population (regular exchange of information in order to establish good relations).
- The company's concern for the living conditions of its employees and their families and not only during working hours.
- Voluntary participation of the company in the improvement of public services, for example, active participation in educational, health, social programs

of the community population. Open communication with beneficiaries is important, as a result of which suitable compensation options can be found.

➤ Creation of conditions for socio-economic development of the employees involved from the population of the communities after the closure of the mine, as well as the population of the communities.

Figure 1 Supporting factors of green entrepreneurship in RA metal mining¹⁴



Conclusion

Metal mining is one of the pillars of the economy of the Principality of Armenia and it has long-term development plans, because on the one hand, there are still long-term reserves of minerals, on the other hand, the demand for non-ferrous and noble metals is growing in the international market. However, currently there is a problem of transferring this profitable industrial branch to the field of green entrepreneurship, because the damage of mining to the environment is obvious.

In this regard, we propose three complementary ways (see Figure 1).

First: to revise the fiscal policy applied in the republic in such a way that it prevents the risks of natural exploitation in the metal mining industry as much as possible by applying special tax rates. In particular, we consider it necessary to

¹⁴ Composed by author.

increase the rates of nature use and environmental protection taxes, which are equivalent in all sectors.

Second: to introduce up-to-date technologies into the mining industry and apply such innovations that will reduce the accumulation of hazardous waste, support the circular economy through waste recycling, and reduce the degree of pollution of air and surrounding water resources.

Third: The inclusion of the community in the management system of the metal mining sector can significantly contribute to the activation of green entrepreneurship. In this sense, it is proposed to clarify the organization-community feedback and clarify the accountability of the corporate social responsibility of the mining organizations.

REFERENCES

1. **Arbidane I., Khachatryan N., Martirosyan N.**, Issues of Accounting information disclosure for ecosystem services, Economic, Finance and Accounting journal, 2023, no 2, pp. 87-108, doi:10.59503/29538009-2023.2.12-87.
2. **Magon, Renata Bianchini**, Sustainability and Performance in Operations Management Research. Journal of Cleaner Production, vol. 190, Elsevier Ltd, pp. 104–17, doi:10.1016/j.jclepro.2018.04.140.
3. Strategy for the development of the mining industry (until 2035), Government decision N 730-JI of the RA May 11, p. 9, 2023.
4. Decree of the President of the Republic of Armenia dated 15.07.2017 N HK-100-A on approving the concept of the management of natural resources of the Republic of Armenia.
5. **Young P.**, Top 10 business risks and opportunities for mining and metals in 2024, <https://ca.linkedin.com/in/paul-young-055632b>
6. **Muradyan S.**, Methodological approaches to effective tax policy, "Alternative" scientific journal, N 2, April-June, 2018, p. 382-388.
7. **Muradyan S., Znotina D.**, Theoretical aspects of fiscal policy in the mining sector, Journal of social sciences "Latgale National Economy Research", N 1(11), November 2019, pp. 117-124.
8. **Tshughuryan A., Khachatryan N.**(), Ecosystem services financial management information security issues, History and politics, scientific

journal, 2023, 2 (25), pp. 71-94., doi: 10.59630/10.59630/25792644-2023.2.25-71.

9. **Tshughuryan A., Savastano M.**, Audit for green business ecosystem operation (2024), Economics, finance and accounting, scientific journal, (1), 13, pp: 85-95 <https://doi.org/10.59503/29538009-2024.1.13-85>

ԿԱՆԱՉ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ Սոֆի Ճուղուրյան

Կանաչ ձեռնարկատիրության պահանջը հատկապես ակնառու է մետաղական հանքարդյունաբերության ոլորտում, որտեղ շրջակա միջավայրին հսկայածավալ վնասներ են հասցվում: Մակայն, մյուս կողմից երկրները չեն կարող հրաժարվել մետաղական հանքարդյունաբերությունից, քանի որ այն ոչ միայն տնտեսապես շահավետ ոլորտ է, այլև սեփական արտադրանքի մեծ պահանջարկ ունի շուկայում: Հետևաբար ներկայումս խնդիր է դրվում այս ավանդական գործարարությունը հնարավորինս փոխադրելու կանաչ ձեռնարկատիրության ոլորտ: Հոդվածում առաջարկվում են ՀՀ մետաղական հանքարդյունաբերությունը դեպի կանաչ ձեռնարկատիրության փոխակերպման աջակցող ուղիներ: Մասնավորապես դրանք առնչվում են կանաչ ձեռնարկատիրության խթանիչ ֆիսկալ քաղաքականության կիրառմանը, կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հաշվետվողականության բարելավմանը, ինչպես նաև՝ նորամուծական տեխնոլոգիաների կիրառմանը ՀՀ մետաղական հանքարդյունաբերությունում:

***Հիմնաբառեր՝** կանաչ ձեռնարկատիրություն, մետաղական հանքարդյունաբերություն, հանքարդյունաբերության ռիսկեր, կայուն զարգացում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:*

ПРОБЛЕМЫ ЗЕЛЕННОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Софи Джугурян

Спрос на «зеленое» предпринимательство особенно очевиден в горнодобывающей промышленности, где наносится огромный ущерб окружающей среде. Однако, с другой стороны, страны не могут отказаться от добычи металлов, поскольку это не только экономически выгодная отрасль, но и наличие высокого спроса на собственную продукцию на рынке. Поэтому в настоящее время стоит задача максимально перевести этот традиционный бизнес в сферу зеленого предпринимательства. В статье предлагаются пути поддержки трансформации горнодобывающей промышленности РА в сторону зеленого предпринимательства. В частности, они связаны с реализацией фискальной политики, стимулирующей зеленое предпринимательство, улучшением корпоративной социальной ответственности организаций, а также использованием инновационных технологий в горнодобывающей промышленности РА.

Ключевые слова: зеленое предпринимательство, добыча металлов, риски горнодобывающей деятельности, устойчивое развитие, корпоративная социальная ответственность.

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

ՈԼՈՐՏՈՒՄ

Մանե Դանիելյան

danielyanmane26@gmail.com

Սյուզի Մելքոնյան

syuzimelqonyan9@gmail.com

Լևոն Մաթևոսյան

levonmat6@gmail.com

Հայաստանի Եվրոպական համալսարան

«Ֆինանսներ» մասնագիտություն,

բակալավրիատ, երրորդ կուրս

Համառոտագիր

Համաշխարհային տնտեսության մեջ հանքարդյունաբերությունն իր ծանրակշիռ մասնաբաժինն ունի: Մի շարք զարգացած ու զարգացող երկրներում այն տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Հայաստանի տնտեսությունում հանքարդյունաբերության ոլորտը ևս էական ներդրում ունի. այն ապահովում է տնտեսական աճ և օտարերկրյա ներդրումների ներգրավումը, ստեղծում է աշխատատեղեր, ինչպես նաև տարածաշրջանային զարգացման հնարավորություններ, ուստի կարելի է նշել, որ հանքարդյունաբերության նշանակությունը Հայաստանի համար բավականին մեծ է: Կայուն զարգացման ուղենիշները ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրների տնտեսությունների զարգացման մոդելների անբաժանելի մասն են: Այն ենթադրում է երկրի տնտեսության կարգավորման ողջ համակարգի և ճյուղերի զարգացման համապատասխանեցում կայուն զարգացման տրամաբանությամբ:

Հիմնաբառեր՝ կայուն զարգացում, հիմախնդիրներ, հանքարդյունաբերության ոլորտ, ռեսուրսներ, բնապահպանական ազդեցություն, ջրջակա միջավայրի աղտոտում, թափոնների կառավարում, բնապահպանական պատասխանատվություն, ջրային ռեսուրսներ:

Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը հանրապետության առաջատար արդյունաբերական ձեռնարկություններից է, որը հիմնադրվել

է 1951 թ.՝ լինելով Հայաստանի հանքարդյունաբերության էական կառույցը: Գործարանի հիմնական գործունեությունը պղնձամոլիբդենային հանքաքարերի արդյունահանումն ու վերամշակումն է:

ԶՊՄԿ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն), ինչպես տարածաշրջանի շատ արդյունաբերական ձեռնարկություններ, զգալի փոփոխություններ ապրեց Խորհրդային Միության փլուզումից հետո, սակայն պահպանեց իր ռազմավարական նշանակությունը երկրի տնտեսության համար: Գործարանին է պատկանում մի շարք հանքավայրերի, այդ թվում՝ պղնձով և մոլիբդենով հարուստ Շահումյանի հանքավայրի շահագործումը, որը կարևորվում է մետաղների արտահանման գործում: Այսօր այն մտնում է "Zangezur Copper Molybdenum Combine" (Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի) միջազգային հանքարդյունաբերական խմբի մեջ, որը վերահսկում է տարածաշրջանում պղնձամոլիբդենային արտադրության մեծ մասը: Ընկերությունն արդյունահանում և վերամշակում է մոլիբդենի և պղնձի հանքաքար, որի վերամշակումից ստացվում են երկու առանձին՝ պղնձի և մոլիբդենի խտանյութեր:

Մոլիբդենից ստացվող օքսիդը և ֆերրոմոլիբդենը հիմնականում օգտագործվում են պողպատաձուլման մեջ որպես ուժեղացնող, ջերմակայունացնող և հակակորոզիոն բաղադրիչներ: Պղինձն այսօր աշխարհում ամենաօգտագործվող և ամենատարածված մետաղներից մեկն է, որը լայնորեն օգտագործվում է արդյունաբերական արտադրության մեջ:

Հինվելով կայուն զարգացման հիմնական սկզբունքի վրա, որն է՝ «բավարարելով ներկայիս սերնդի պահանջները՝ չնվազեցնել հաջորդ սերունդների սեփական կարիքները բավարարելու հնարավորությունները», ԶՊՄԿ-ն իրականացնում է զարգացման բազմաթիվ ծրագրեր: Այս ամենն ընկերությանը թույլ է տալիս հասնել իրական և շոշափելի արդյունքների և բոլոր շահագրգիռ կողմերին, ինչպես նաև երկարաժամկետ կտրվածքով հնարավորության ստեղծում համայնքի և երկրի տնտեսական զարգացման համար: Աշխարհն ունի ԶՊՄԿ-ի կողմից արտադրվող մետաղների կարիքը՝ ենթակառուցվածքների զարգացման, տնտեսությունների կայունացման և ընդլայման համար: Արտադրանքի նկատմամբ պահանջարկը պետք է բավարարվի՝ հաշվի առնելով բոլոր խնդիրները՝ սոցիալական, բնապահպանական, անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության համատեքստերում: Այնպես, որ ներկա սերնդի կարիքների բավարարումը բացասաբար

չանրադառնա հաջորդ սերունդների կարիքների բավարարման հնարավորությունների վրա: Սա է կայուն զարգացման հիմնարար սկզբունքը և ԶՊՄԿ-ի բոլոր նախաձեռնությունների նախապայմանը¹⁵:

ԶՊՄԿ-ն նաև իրականացնում է գործառնությունների որոշ ասպեկտներ ոչ պատշաճ կառավարման դեպքում, որոնք կարող են շեղվել կայուն զարգացման ուղուց, ինչպես օրինակ, ջրի և հողի հետագա օգտագործման ընտրության, տեղական ինքնակառավարման մարմինների հարմարավետության ապահովման, ջերմոցային էֆեկտի, գազերի արտանետումների և արտադրանքի օգտագործման հարցերում: Որպես առաջատար հանքարդյունահանող ընկերություն՝ բախվում են այնպիսի մարտահրավերների հետ, ինչպիսիք են շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցումը, առողջության և անվտանգության պահպանումը, և մեր գործունեության ընթացքում լուծում են բազմաթիվ սոցիալական և տնտեսական խնդիրներ: Ամբողջ Ընկերության մասշտաբով նրանք սահմանել են իրագործման չափորոշիչներ՝ լուծելու ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի առաջ քաշած խնդիրները:

Հանդիսանալով Կովկասյան տարածաշրջանի խոշորագույն հանքարդյունաբերական ընկերություն՝ ԶՊՄԿ-ն գիտակցում է, որը կարող է ունենալ որոշակի ազդեցություն շրջակա միջավայրի վրա իր գործունեության արդյունքում: Հետևաբար ընկերությունը հանձն է առել իր գործունեության բոլոր մակարդակներում ու փուլերում, այն է՝ երկրաբանական հետախուզության, նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում իրականացնել շարունակական բարելավման միջոցառումներ Ընկերության գործունեությամբ պայմանավորված ազդեցությունները մեղմելու նպատակով: Միևնույն ժամանակ Ընկերությունը պարտավորվել է ապահովել էներգիայի, ջրի և այլ բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործում, ինչպես նաև կիրառվող թունավոր նյութերի ու թափոնագոյացման կրճատում ու վերամշակում: Նվազեցնել, մեղմել և հնարավորության դեպքում խուսափել շրջակա միջավայրի վրա ազդեցություններից՝ Ընկերության գործունեության բոլոր ոլորտներում բնապահպանական կառավարման համակարգ ներդնելու միջոցով: Մենք գիտակցում ենք կլիմայի փոփոխության վերաբերյալ հանքարդյունաբերության ոլորտում իրազեկվածությունը բարձրացնելու և

¹⁵ ԶՊՄԿ-ի պաշտոնական կայքէջ: <http://www.zcmc.am/arm/sustainability/our-strategy/>

որոշումների կայացման մեջ այդ գործոնի ներառման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի ինչպես կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, այնպես էլ երկարաժամկետ բնապահպանական ազդեցությունների կրճատմանը¹⁶:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման հիմնախնդիրներն արտացոլում են հանքարդյունաբերության ոլորտի բարդ և բազմակողմանի մարտահրավերները, որոնք ազդում են ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ սոցիալ-տնտեսական համակարգերի վրա: Հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսության հիմնասյուներից մեկն է, և հատկապես ԶՊՄԿ-ն մեծ դեր ունի երկրի արդյունաբերության և տեղական համայնքների զարգացման մեջ: Այն, սակայն, զուգահեռաբար առաջացնում է լուրջ բնապահպանական, սոցիալական և կառավարման խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել կայուն զարգացման նպատակներին համապատասխան: ԶՊՄԿ-ն հանքարդյունաբերական ոլորտում ընդգրկում է մի շարք լուրջ մարտահրավերներ, որոնք կարող են խոչընդոտել ինչպես տնտեսական կայունությունը, այնպես էլ շրջակա միջավայրի և սոցիալական պատասխանատվության ապահովումը:

- *Շրջակա միջավայրի աղտոտում:* Հանքարդյունաբերությունը մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին՝ հատկապես ջրի, հողի և օդի աղտոտման տեսքով:
- *Մթնոլորտային արտանետումներ:* Հանքի շահագործման ընթացքում առաջանում են փոշու, գազերի և այլ վտանգավոր նյութերի արտանետումներ, որոնք աղտոտում են շրջակա միջավայրը և վնասում առողջությանը:

ԶՊՄԿ-ի գործունեությունը ենթադրում է հանքարդյունաբերությանը բնորոշ որոշակի մարտահրավերներ՝ միևնույն ժամանակ առաջարկելով ապահով շրջակա միջավայր ստեղծելու հնարավորություններ: Ընկերության արժեքների հիմքում ընկած է շրջակա միջավայրի հետ ապահով ու անվտանգ համակեցության գաղափարը, ինչի համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել օդի որակի վրա բացասաբար ներազդող աղտոտիչներին: Ընկերության գործունեությամբ պայմանավորված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հետքը զգալիորեն կրճատելու նպատակով ԶՊՄԿ-ի շրջակա միջավայրի


¹⁶ Կայուն զարգացման հաշվետվություն, էջ 76:

<http://www.zcmc.am/arm/sustainability/>

պահպանության շրջանակում հատուկ տեղ է հատկացվել օդի որակի ապահովման հարցերին: Օրինակ՝ 2020-2021 թթ. փոշու արտանետումների կրճատման նպատակով առաջնային ջարդիչ կայանում տեղադրվել է ժամանակակից ասպիրացիոն համակարգ, որի համարժեք համակարգերը մենք նախատեսում ենք տեղադրել նաև հարստացուցիչ ֆաբրիկայում և այլ արտադրամասերում: Բացի այդ՝ մեր առցանց մշտադիտարկման համակարգը թույլ է տալիս իրականացնել իրական ժամանակով մշտադիտարկում և հայտնաբերել հնարավոր անհամապատասխանությունները վաղ փուլում՝ հնարավորություն տալով ժամանակին ձեռնարկել ուղղիչ գործողություններ: 2022 թ. ԶՊՄԿ-ի կողմից շահագործվող ենթակառուցվածքների համախառն արտանետումները կազմել են 1,092.9 տոննա, ինչը 14% պակաս է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ: Ամենագրավի կրճատումն արձանագրվել է ծծմբի երկօքսիդի արտանետումների մասով, որոնք կրճատվել են գրեթե կիսով չափ:

Գծապատկեր 1.

ԶՊՄԿ-ի մթնոլորտի արտանետման ցուցանիշները՝ ըստ 2021-2022 թթ. (տոննա)¹⁷




- *Ջրային ռեսուրսների աղտոտում:* Հանքային թափոնների արտահոսքը կամ ոչ ճիշտ կառավարումը կարող են աղտոտել ջրային ռեսուրսները, ինչը երկարաժամկետ վնաս է հասցնում տարածաշրջանի էկոլոգիային: Հանքարդյունաբերական ընկերությունների արտադրական գործընթացների համար պահանջվում են մեծածավալ ջրային ռեսուրսներ: Օրինակ՝ ԶՊՄԿ-

¹⁷ Աղբյուրը՝ ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հաշվետվություն 2021-2022 թթ., էջ 90:
<http://www.zcmc.am/arm/sustainability/our-strategy/>

ն ջուրն օգտագործում է արտադրության, տեխնիկական ու կենցաղային նպատակներով: Արդյունավետ ջրօգտագործումն ընկերության կարևորագույն նպատակներից է, և դրան հասնելու համար մենք ներդրել ենք ջրի կառավարման պլան, որի շրջանակներում իրականացվում է ջրասպառման և ջրօգտագործման մշտադիտարկում: ԶՊՄԿ-ի համար կարևոր օղակ է Ողջի գետը ու վտակները, որոնք ջրի հիմնական աղբյուր են: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը, որտեղ տեղակայված են Ընկերության հիմնական ակտիվները, գտնվում է սակավ ջրային ռեսուրսներ ունեցող տարածաշրջանում: Հետևաբար հաշվի առնելով տարածաշրջանում ջրի սակավության խնդիրը՝ ԶՊՄԿ-ն ձգտում է նորագույն տեխնոլոգիական լուծումների միջոցով ապահովել ջրային ռեսուրսների արդյունավետ կիրառում: Ընկերության համար բոլոր տարածքներում ընդհանուր թույլատրելի ջրառի ծավալները կազմում են տարեկան 68,840 հազար մ³: Մինչդեռ 2022 թ. իրական ջրառի ծավալը զգալիորեն ցածր էր՝ կազմելով 49,088 հազար, որից 114.9 հազար մ³/տ կազմում էր տնտեսական ու կենցաղային կարիքների համար օգտագործվող խմելու ջուրը:

Գծապատկեր 2.

ԶՊՄԿ-ի ջրօգտագործման աղբյուրները՝ ըստ 2021-2022 թթ.¹⁸




¹⁸ ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հաշվետվություն 2021-2022 թթ., էջ 99:


<http://www.zcmc.am/arm/sustainability/our-strategy/>

- *Թափոնների կառավարում:* ԶՊՄԿ-ի արդյունահանման ու արտադրական գործընթացների հետևանքով, բնականոն կերպով առաջանում են թափոններ՝ որպես կողմնակի արտադրանք: Ընկերության գործունեության արդյունքում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է լավագույն միջազգային փորձի և Ընկերությունում կիրառվող թափոնների կառավարման աստիճանակարգային մոդելի համաձայն: Մեր կողմից ներգրավված կապալառուները պատասխանատու են սեփական գործունեության հետևանքով առաջացող թափոնների հեռացման և վերամշակման համար: Թափոնների տեղափոխումն իրականացվում է արտոնագրված հատուկ մեքենաներով, իսկ լրիվ գործընթացը՝ մասնագիտական անվտանգության և բնապահպանական ստանդարտ կանոնակարգերի համաձայն: Մենք կապալառուների գործողությունները պարբերաբար ստուգելու և մշտադիտարկելու միջոցով խստորեն վերահսկում ենք վերոնշյալ գործընթացները: Բոլոր թափոնահոսքերն արձանագրվում են թափոնների քարտեզագրման հիմք հանդիսացող հատուկ գրանցամատյանում: Այնուհետև այդ գրանցված տվյալներն արտացոլվում են համապատասխան մարմիններ ներկայացվող մեր տարեկան վիճակագրական և բնապահպանական վճարների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություններում: Այս եղանակով մենք իրականացնում ենք Ընկերության թափոնների գոյացման և կառավարման վերահսկողություն և մշտադիտարկում: 2022 թ. Ընկերության թափոնների ընդհանուր ծավալը կազմել է 36 մլն տոննա՝ ներառելով տարատեսակ վտանգավոր դասի թափոններ, այն է՝ 20.5 մլն. մետրային տոննա վտանգավոր դասի թափոններ և 15.7 մլն. տոննա ոչ վտանգավոր դասի թափոններ:

Գծապատկեր 3. ԶՊՄԿ-ի թափոնները՝ ըստ 2021թ.¹⁹



Գծապատկեր 4. ԶՊՄԿ-ի թափոնները՝ ըստ 2022թ.²⁰



ԶՊՄԿ-ն հավատարիմ է մնում իր այն սկզբունքին, որով պարտավորվել ենք շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով որդեգրել թափոնների կրճատման ռազմավարություններ ու կիրառել թափոնների պատասխանատու կառավարման տեխնոլոգիաներ: Փնտրում են լուծարման թափոնների կառավարման գործընթացը բարելավելու ուղիներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թափոնների հեռացմանը նախորդող կրկնակի օգտագործման, վերամշակման և վերականգնման հնարավորություններին, թափոնների կանխարգելմանն ու կրճատմանը,

¹⁹Աղբյուրը՝ ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հաշվետվություն 2021-2022 թթ., էջ 83:

<http://www.zcmc.am/arm/sustainability/our-strategy/>

²⁰Աղբյուրը նույնն է:

ինչպես նաև համակարգերի և գործընթացների վերանայմանը: Թափոնների կառավարման ռազմավարության ենթարկվում են կրկնակի օգտագործման և վերամշակման.

- չտեսակավորված պղնձի ջարդոն,
- չաղտոտված ձուլածո պողպատե ջարդոն:
- ✓ Օգտագործված արդյունաբերական յուղերը կրկնակի օգտագործվում են հանքաքարի մանրացման արտադրամասում՝ այլ սարքավորումների շահագործման համար:
- ✓ Թեփը կրկնակի օգտագործվում է հետլիցքի և յուղերի արտահոսքերը կանխելու նպատակով:
- ✓ Դրանցից են նաև օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե մետաղալարերը:

ԶՊՄԿ-ի ապագա պլանները և թիրախային ցուցանիշները

- *Գլոբալ չափանիշների կատարում և համապատասխանություն:* Առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսում են հավատարիմ մնալ և համապատասխանել միջազգային բնապահպանական կառավարման չափանիշներին, որոնցից են՝ ՄՖԿ-ի և ISO 14001 չափանիշները: Ընկերության գործունեության տարբեր ոլորտների, այն է՝ պոչամբարների կառավարման, ջրային ռեսուրսների կառավարման և կենսաբազմազանության պահպանման գործողությունները կիրականացվեն վերոնշյալ չափանիշներին համապատասխան:
- *Ջերմոցային գազերի արտանետումներ:* ԶՊՄԿ-ն ակտիվորեն մշակում է գիտահեն թիրախային ցուցանիշների վրա հիմնված գործողությունների պլան, որի միջոցով կմշակվի ջերմոցային գազերի արտանետումների էական կրճատմանն ուղղված մեր ծրագիրը:
- *Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ:* Հաշվի առնելով չվերականգնվող էներգիայի աղբյուրներից հրաժարվելու պարտավորությունը՝ կոմբինատը հակված է ներդնելու և գործառնություններում կիրառելու էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: Վերականգնվող էներգետիկայի և ժամանակակից լուծումների միջոցով ձգտում են կրճատել կախվածությունը հանածո վառելիքից:

- *Ածխածնի հետքի մշտադիտարկում:* Շարունակելով ջերմոցային գազերի կրճատմանն ուղղված կոմբինատի հանձնառությունը՝ նախատեսում են ներդնել ածխածնի հետքի մշտադիտարկման համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի ստանալ ածխածնի արտանետումների վերաբերյալ իրական ժամանակի ռեժիմով տվյալներ՝ դրանով իսկ թույլ տալով ժամանակին իրականացնել համապատասխան միջամտություններ և օպտիմալացնել կիրառվող ռազմավարությունը:
- *Ջրի կառավարում:* Քաջ գիտակցելով ջրի կարևորությունը, մասնավորապես՝ հանքարդյունաբերական գործառնությունների առումով, կոմբինատը ներկայումս ներդնում է ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ համակարգ ողջամիտ և խնայող ջրօգտագործում ապահովելու նպատակով: Մասնավորապես Ընկերության ողջ գործունեության ընթացքում նախատեսվում է սահմանել և ուղորդել ջրային ռեսուրսների հայտնաբերման, օգտագործման և ջրահեռացման միջոցառումները:
- *Միջազգային ԲՄԿ վարկանիշ:* ԶՊՄԿ-ի շահագրգիռ կողմերի համար Ընկերության ԲՄԿ կատարողականի վերաբերյալ թափանցիկ տեղեկատվություն ապահովելու նպատակով կոմբինատը ձգտում է միջազգային վարկանիշային հարթակում ստանալ ԲՄԿ վարկանիշ: Այս վարկանիշը կարտացոլի Ընկերության նվիրումն ու կայուն հանքարդյունաբերությանն ուղղված շարունակական ջանքերը:

Եզրակացություն

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման հիմնախնդիրների համատեքստում առանձնանում են մի շարք բարդ և փոխկապակցված հարցեր, որոնք առնչվում են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու բնապահպանական ասպեկտներին: Հանքարդյունաբերությունը, լինելով բարձր ռիսկային ոլորտ, պահանջում է ռազմավարական մոտեցում, որի առանցքը կլինի բնության և հասարակության միջև հավասարակշռության պահպանումը՝ պահպանելով նաև տնտեսական շահավետությունը: Կայուն զարգացումը ԶՊՄԿ-ի համար նշանակում է հարմարվել ներկայիս գլոբալ էկոլոգիական

մարտահրավերներին՝ միաժամանակ ապահովելով իր դիրքը տնտեսության ոլորտում:

Սոցիալական պատասխանատվության դերը ԶՊՄԿ-ի կայուն զարգացման ծրագրերում նույնպես անփոխարինելի է: Հանքարդյունաբերությունը պետք է ոչ միայն ապահովի աշխատանքային անվտանգ պայմաններ և համարժեք վարձատրություն իր աշխատակիցների համար, այլև ակտիվորեն ներգրավվի տեղական համայնքների զարգացման գործում: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում ընկերությունը պետք է մշակի և իրականացնի ծրագրեր, որոնք ուղղված կլինեն կրթության, առողջապահության և ենթակառուցվածքների զարգացմանը:

Այսպիսով՝ ԶՊՄԿ-ի կայուն զարգացման ռազմավարությունը պետք է համակցի բոլոր այս գործոնները՝ ապահովելով երկարաժամկետ տնտեսական աճ, շրջակա միջավայրի պաշտպանություն և սոցիալական պատասխանատվության բարձր մակարդակ: Սա թույլ կտա ընկերությանը պահպանել իր դիրքն ազգային և միջազգային մակարդակներում՝ միաժամանակ ներդրում ունենալով կազմակերպության հետագա զարգացման գործում:

Այս ամենից ելնելով՝ առաջարկում ենք.

ա. Էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործում. հանքարդյունաբերական համալիրում ներդնել էներգախնայող տեխնոլոգիաներ, ինչպես նաև արևային կամ քամու էներգիայի աղբյուրներ, նվազեցնելու էներգիայի ծախսերը:

բ. Կանաչ գոտիների ստեղծում. ստեղծել կանաչ գոտիներ և էկոլոգիական միջանցքներ, որոնք կխթանեն բնապահպանական հավասարակշռությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԶՊՄԿ-ի կայուն զարգացման հաշվետվություն 2021-2022 թթ.:
2. <http://www.zcmc.am/arm/sustainability/our-strategy/>

CHALLENGES OF SUSTAINABLE DEVELOPMENT IN THE MINING SECTOR

Syuzi Melkonyan

Mane Danielyan

Levon Matevosyan

The mining industry occupies a dominant position in the global economy in many developed and developing countries. It's one of the key sectors in the Armenian economy, it's developing economy and raising abroad investing, creates new workspaces, and also provides an opportunity for the development of the area. And so, we should say that mining realm have a big meaning for Armenia. The guidelines for sustainable development are currently an integral part of the economic development models of many countries around the world. It involves bringing the entire system of regulation of the country's economy and the development of industries in line with the logic of sustainable development.

Keywords. *sustainable development, problems, mining sector, resources, problems, environmental impact, environmental pollution, waste management, environmental responsibility, water resources, emissions.*

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ОТРАСЛИ

Сюзи Мелконян

Мане Даниелян

Левон Матевосян

Горнодобывающая промышленность занимает доминирующее положение в мировой экономике во многих развитых и развивающихся странах. Это один из ключевых секторов в экономике Армении, он развивает экономику и привлекает зарубежные инвестиции, создает новые рабочие пространства, а также предоставляет возможность для развития сферы. Таким образом, следует сказать, что горнодобывающая сфера имеет большое значение для Армении. Руководящие принципы устойчивого развития в настоящее время являются неотъемлемой частью моделей экономического развития многих стран мира. Это подразумевает приведение всей системы регулирования экономики страны и развития отраслей в соответствие с логикой устойчивого развития.

Ключевые слова: устойчивое развитие, проблемы, горнодобывающий сектор, ресурсы, проблемы, воздействие на окружающую среду, загрязнение окружающей среды, управление отходами, экологическая ответственность, водные ресурсы, выбросы.

**ԶՊՄԿ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ
ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Ռոզա Սահակյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
«Ֆինանսներ» մասնագիտության
բակալավրիատ, չորրորդ կուրս
rozasahakyan2003@gmail.com

Համառոտագիր

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ) փակ բաժնետիրական ընկերություն է, որը, տեղակայված լինելով Քաջարան քաղաքում՝ Երևանից 345 կմ և Սյունիքի մարզկենտրոն Կապանից 25 կմ հեռավորության վրա, համարվում է Հայաստանի Հանրապետության առաջատար հանքարդյունահանող ընկերությունը: Ներկայումս ԶՊՄԿ-ը շահագործում է մոլիբդենի և պղնձի զգալի հաստատված ու կանխատեսվող պաշարներով հանքավայր: Տարիներ շարունակ կոմբինատի գործունեությունը գտնվել է ՀՀ կառավարության, հանրության և ԶԼՄ-ի ուշադրության կենտրոնում՝ արժանանալով բազմաթիվ քննադատությունների և հիմք հանդիսանալով տարբեր հետազոտությունների:

Հոդվածում ներկայացվում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությունը՝ զուգահեռ ցույց տալով նրա ազդեցությունը ՀՀ տնտեսության, շրջակա միջավայրի և դրա պահպանության վրա:

Հիմնաբառեր՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, մետաղական հանքարդյունաբերություն, կայուն զարգացում, պղնձի և մոլիբդենի հանքաքար, խտանյութ:

Քաջարանում դեռևս առաջին երկրաբանական հետազոտությունները կատարվել են 1880-ական թվականներին և շարունակվել մինչև 1931 թվականը, երբ տարածքում սկսվել է լայնածավալ հորատման ծրագրերի իրականացումը: Կոմբինատի առաջին արտադրանքը թողարկվել է 1951 թվականին և հենց նույն թվականին էլ

ընկերությունը հիմնվել է որպես պետական ձեռնարկություն: Իր գործունեության ողջ ընթացքում ՋՊՄԿ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ունեցել է բարձրակարգ և արհեստավարժ մասնագիտական անձնակազմ, որի շնորհիվ էլ դրսևորել է լավագույնս: ՋՊՄԿ-ն մոլիբդենի և պղնձի արդյունահանման ու վերամշակման ոլորտում ունի բացառիկ մրցակցային առավելություններ: Ընկերությունը նպատակ ունի կայուն զարգացման սկզբունքներով առավելագույնի հասցնել իր բաժնետերերի արդյունքները, որոնց հիմնարար մասն արժեքներին հասնելն է բարոյապես և սոցիալապես պատասխանատու ձևով՝ հավատարիմ մնալով ընկերության երկարաժամկետ, կայուն զարգացման սկզբունքներին: ՋՊՄԿ պաշտոնական էջում նշվում է. «Մենք ջանում ենք պահպանել մեր մրցունակությունը գործառնական գերազանցությամբ և նորարարություններով: Այդ նպատակով իրականացվող միջազգայնություններում են հետազոտման, արդյունահանման և վերամշակման նոր մեթոդների որակական զարգացումներ, որոնք ճանապարհ են բացում դեպի ավելի սակավ էներգատար, մաքուր և առավել ծախսախնայող արտադրություն»²¹: ՋՊՄԿ-ն շահագործում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը բաց եղանակով՝ արդյունահանելով տարեկան 12,8 մլն. տոննա հանքաքար²²:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության առաջատար հիմնվելով կայուն զարգացման հիմնական սկզբունքի վրա. «բավարարելով ներկայիս սերնդի պահանջները՝ չնվազեցնել հաջորդ սերունդների սեփական կարիքները բավարարելու հնարավորությունները», ՋՊՄԿ-ն իրականացնում է զարգացման բազմաթիվ ծրագրեր: Այս ամենը թույլ է տալիս հասնել իրական և շոշափելի արդյունքների ընկերությանը և բոլոր շահագրգիռ կողմերին, ինչպես նաև երկարաժամկետ կտրվածքով հնարավորության ստեղծել համայնքի և երկրի տնտեսական զարգացման համար: հանքարդյունահանող ընկերությունը, ահռելի ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա: «Մենք համարում ենք, որ շրջակա միջավայրը մեր հիմնական արժեքն է: Իր գոյության 70 տարիների ընթացքում ՋՊՄԿ-ն պարտավորվել է վերահսկել և նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունը: «Մենք այժմ քայլեր ենք ձեռնարկում մեծացնելու

²¹ Zangezur Copper Molybdenum Combine, <http://www.zcmc.am/>, 2024:

²² <http://www.zcmc.am/arm/our-operations/>, 2024:


այս հանձնառությունը, որպեսզի ապահովենք ավելի կայուն ապագա բոլորի համար», - նշվել է կոմբինատի 2021 թվականի Կայուն զարգացման զեկույցում:

Շրջակա միջավայրի վրա ԶՊՄԿ-ի ազդեցությունը նվազեցնելու նպատակով իրականացվում է՝

1. էներգախնայող տեխնոլոգիաների կիրառման ռազմավարություն,
2. ջրի և այլ կարևորագույն բնական ռեսուրսների օպտիմալ օգտագործում,
3. թափոնագոյացման կրճատում,
4. թափոնների անվտանգ կառավարում և վերամշակում,
5. կիրառվող վտանգավոր նյութերի կրճատում²³:

Բացի վերոնշյալ գործողություններից՝ ԶՊՄԿ ղեկավարության մշտադիտարկման ներքո են նաև ջրասպառումն ու ջրօգտագործումը: Գիտենք, որ հանքարդյունաբերական ընկերությունների արտադրական գործընթացների համար պահանջվում են մեծածավալ ջրային ռեսուրսներ: ԶՊՄԿ-ի գործունեության հետևանքով առաջացող զգալի քանակությամբ ջրերը հիմնականում ուղղվում են դեպի մակերևութային ջրային մարմիններ: 2022 թ. ընկերության փաստացի ջրահեռացման ծավալները կազմել են 41,359 հազար մ³, որից 99,9% ուղղվել է դեպի Աճանան գետը և միայն մոտ 40 հազար մ³՝ դեպի քաղաքի կոյուղատարեր:

Գծապատկեր 1. ԶՊՄԿ օգտագործված ջրային ռեսուրսներ, հազար մ³



24

²³ ԶՊՄԿ, Կայուն զարգացման հաշվետվություն, 2022, էջ 78:


Չնայած բնապահպանական և ՇՄ պահպանման միջոցառումներին՝ ԶՊՄԿ-ի կողմից շահագործվող Արծվանիկի պոչամբարն անհանգստությունների տեղիք է տալիս: Դեռևս 2019 թ. նախատեսված էր, որ 2024 թ. կոնսերվացվելու է Արծվանիկի պոչամբարը և հանձնվելու այլ ծրագրերի իրականացման համար, սակայն այն օգտագործվում է մինչ օրս:

Պոչամբարին մոտ գտնվող Արծվանիկ գյուղը, որի անունով էլ կնքվել է պոչամբարը, գրեթե զրկված է գյուղատնտեսություն վարելու հնարավորությունից: Օդը կեղտոտ է, պոչամբարը խիստ ազդում է և՛ բուսականության, և՛ մարդկանց վրա: Ազդեցությունները մեղմելու նպատակով պոչամբարին հարակից գյուղերի բնակիչներին սահմանված չափով գումար է տրվում Ընկերության կողմից:

ԶՊՄԿ-ն մշտապես մոնիտորինգ է իրականացնում նաև օդի որակի վրա բացասաբար ներազդող աղտոտիչների նկատմամբ: Ընկերության ՇՄ պահպանության շրջանակներում հատուկ տեղ է հատկացվել օդի որակի ապահովման հարցերին: 2020-2021 թթ. փոշու արտանետման կրճատումների նպատակով ներդրվել է ժամանակակից ասպիրացիոն համակարգ: 2022 թ. ԶՊՄԿ-ի կողմից արտանետումները կազմել են 1,092.9 տոննա, ինչը 14 % պակաս է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ: Զգալիորեն կրճատվել է ծծմբի երկօքսիդի արտանետումների ծավալը, մոտավորապես կիսով չափ:

²⁴ Նույն տեղում, էջ 79:

Գծապատկեր 2. ՁՊՄԿ-ի կողմից կատարված արտանետումները
2020-2021 թթ.²⁵



Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, արդյունաբերության դերը տնտեսությունում բավականին մեծ է, քանի որ այն կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 1/5 մասը, և հենց արդյունաբերության զարգացմամբ է պայմանավորված երկրի տնտեսության առաջխաղացումը:

Արդյունաբերական ոլորտի զարգացման խթանումը կարող է լինել կայուն զարգացման բանալին: Տնտեսական աճին և զարգացմանը նվիրված գրականության մեջ հիմնավորվում է, որ նույնքան ամուր կապ է առկա արդյունաբերական արտադրանքի աճի և ՀՆԱ-ի աճի միջև²⁶:


ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչն արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Հատկապես պղինձը, որով հարուստ է Հայաստանը (ի թիվս՝ լիթիումի, կոբալտի, նիկելի և հազվագյուտ տարրերի), կրիտիկական թոփ 5 մետաղներից է, որոնցից էլ կախված են ապագայի տեխնոլոգիաները՝ էլեկտրական

²⁵ Նույ տեղում, էջ 88:

²⁶ **Ջեյրանյան Ա.**, ՈԻԳԸ 41-րդ նստաշրջանի գիտական հոդվածների ժողովածու, «Երիտասարդ գիտնական» պարբերական, ՀՊՏՀ, էջ 183:

մեքենաները, արևային վահանակները և կանաչ էներգիայի կուտակման ժամանակակից մարտկոցները:

Գծապատկեր 3. Հանքարդյունաբերության ոլորտի արտահանման ծավալները (հազար ԱՄՆ դոլար)²⁷



Ինչպես տեսնում ենք գծապատկեր 3-ից, հանքարդյունաբերությունը հսկայական ցուցանիշներ է գրանցել 2019-2022 թթ. արտահանման մասով, 2019, 2020, 2021 և 2022 թվականներին հանքարդյունաբերության ոլորտի արտահանման ծավալները կազմել են համապատասխանաբար 743; 828,1; 982,2 և 1022 հազար ԱՄՆ դոլար: Սակայն 2023 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին այդ ցուցանիշները նվազել են: Ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ 2023 թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանում արտադրվել է 208 հազար տոննա պղնձի խտանյութ, որը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ 13.4%-ով կրճատվել է: Համեմատության համար նշենք, որ հակառակ պատկերն ենք ստացել մոլիբդենի խտանյութի պարագայում. նույն ընթացքում արտադրվել է 18 հազար տոննա մոլիբդենի խտանյութ՝ աճելով 6.4%-ով: Մաքսային ծառայության

²⁷ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

հրապարակած վերջին տվյալների համաձայն՝ 2023թ. առաջին կիսամյակում Հայաստանից արտահանվել է 147 հազար տոննա պղնձի խտանյութ, որը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ կրճատվել է մոտ 58 հազար տոննայով կամ 28 %-ով:

Տվյալներից պարզ է դառնում, որ հանքարդյունաբերության կշիռը Հայաստանի տնտեսության մեջ նվազել է:

Եթե 2021 թվականին, ըստ Վիճակագրական կոմիտեի, Հայաստանի համախառն ներքին արդյունքի 5.5 %-ն է ապահովել հանքարդյունաբերությունը, ապա 2022-ին՝ 3.8 %-ը: 2023 թ. առաջին երեք եռամսյակներին՝ 3-4 %-ը: Հանքահումքային արտադրանքի կշիռը նվազել է նաև Հայաստանի արտահանման կազմում: Այդ տեղի է ունեցել ինչպես հանքահումքի արտահանման ծավալների կրճատման, այնպես էլ մյուս ապրանքների, գլխավորապես՝ վերաարտահանվող ապրանքների առաջանցիկ աճի արդյունքում²⁸:

ԶՊՄԿ-ն գլխավորում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թ. երրորդ եռամսյակում հրապարակած 1000 խոշոր հարկատուների ցանկը: Ընկերությունն ավելի քան 31 միլիարդ դրամով ավելացրել է հարկային վճարումները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: 2024 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ԶՊՄԿ-ն վճարել է 83,668,387 հազար դրամ հարկ՝ արդեն գերազանցելով 2023 թ. ընթացքում իր կողմից վճարված հարկերի տարեկան ցուցանիշը (70,881,967 հազար դրամ):

Եզրակացություն

Թերևս անգնահատելի է հանքարդյունաբերության դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում: Այն բավականին մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ ՀՆԱ-ի կազմում, և այս ոլորտի զարգացումը կնպաստի տնտեսության առաջխաղացմանը: Հանքարդյունաբերական ոլորտում ԶՊՄԿ կողմից մատուցվող ծառայությունների և արտադրանքի աճը բավականին խոստումնալից են, սակայն պետք չէ մոռանալ շրջակա միջավայրի պահպանության և հասցվող մեծածավալ վնասների մասին: Անհրաժեշտ է ձեռնարկել որոշակի համակարգային

²⁸ <https://hetq.am/hy> , 2023թ.:

բարեփոխումներ ու միջոցառումներ, իրականացնել գործողություններ, որոնք կնպաստեն ՀՀ արդյունաբերական ոլորտի զարգացմանը և երկրի տնտեսական աճին՝ առանց բնապահպանական և սոցիալական կատաստրոֆիկ աղտերի հարուցելու: Այս ամենին հնարավոր է հասնել ճիշտ և նախապես պլանավորված աշխատանքների, որակավորված ու սրտացավ պրոֆեսիոնալ անձնակազմի միջոցով: Ծրագրերի իրականացմանը մեծապես կարող են նպաստել հանրության և ՀՀ կառավարության կարծիքներն ու որոշումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԶՊՄԿ, Կայուն զարգացման հաշվետվություն, 2022:
2. **Ջեյրանյան Ա.**, ՀՊՏՀ, ՈՒԳԸ 41-րդ նստաշրջանի գիտական հոդվածների ժողովածու, «Երիտասարդ գիտնական» պարբերական, էջ 183:
3. ՀՀ վիճակագրական կոմիտե
4. ՀՀ մաքսային ծառայություն
5. <https://hetq.am/hy>
6. <http://www.zcmc.am/>
7. <https://armstat.am/am/>
8. <https://www.src.am/am/legal>

ВЛИЯНИЕ ЗММК НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ И ЭКОНОМИКУ РА

Роза Саакян

Зангезурский медно-молибденовый комбинат (ЗММК) является закрытым акционерным обществом. Расположенный в городе Каджаран, в 345 км от Еревана и в 25 км от Капана, областного центра Сюника, он считается ведущим горнодобывающим предприятием Республики Армения. В настоящее время ЗММК эксплуатирует рудник со значительными подтвержденными и предполагаемыми запасами молибдена и меди. На протяжении многих лет

деятельность комбината находится в центре внимания правительства РА, общественности и средств массовой информации, получает множество критических замечаний и является основой многих и многих исследований. В статье представлена деятельность Зангезурского медно-молибденового комбината, показывая в то же время его влияние на экономику РА, окружающую среду и ее защиту.

Ключевые слова: Зангезурский медно-молибденовый комбинат, добыча металлов, устойчивое развитие, медно-молибденовая руда, концентрат.

THE IMPACT OF ZCMC ON THE ENVIRONMENT AND THE RA ECONOMY

Roza Sahakyan

Zangezur copper-molybdenum combine (ZCMC) is a closed joint-stock company. Located in the city of Kajaran, 345 km from Yerevan and 25 km from Kapan, the regional center of Syunik, it is considered the leading mining company of the Republic of Armenia. ZCMC currently operates a mine with significant proven and inferred reserves of molybdenum and copper. For years, the activity of the combine has been in the center of attention of the RA government, public and mass media, receiving many criticisms and being the basis of many and many studies. The article presents the activities of the Zangezur copper-molybdenum combine, showing at the same time its influence on the RA economy, the environment and its protection.

Keywords: *Zangezur copper-molybdenum combine, metal mining, sustainable development, copper and molybdenum ore, concentrate.*

**ԿԱՆԱՉ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Վարդուհի Թանանյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտության հայցորդ, առաջին կուրս
tananyanvarduhi.2000@gmail.com

Համառոտագիր

